ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր

ԵՐԵՎԱՆ 2009թ

« Համաշխարհային պատմություն » առարկայի չափորոշիչներն ու ծրագրերը մշակվել են ՀՀ ԿԳ նախարարի 10.11. 2006թ N892-Ա/Ք հրամանով հաստատված հանրակրթական ավագ դպրոց չափորոշիչների և ծրագրերի հիման վրա:

Լրամշակել է՝ Լիլիթ Հովհաննիսյան

« Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ

**Վաճառքի ենթակա չէ:**

Երևան - 375070 Ս.Վրացյան փող. 73
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Հաստատված է
ՀՀ ԿԳ նախարարի

---02.12. 2008թ. N -1078- Ա/Ք հրամանով

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

(X - XII դասարաններ)

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի հումանիտար հոսքի խորացված ուսուցման չափորոշչի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, ՀՀ կառավարության 2008թ. հաստատած Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը:

«Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի սույն չափորոշիչը ներառում է`

- առարկայի հայեցակարգը,
- առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնառության տարատեսակները և միջոցները,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում` գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երկու` Ա և Բ մակարդակներով, որոնք համապատասխանում են` Ա - միջին, Բ - բարձր պատրաստվածությանը,
- ուսումնառության արդյունքների գնահատումը,
- երաշխավորվող գրականության ցանկը:

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Պատմությունը միշտ էլ եղել և մնում է հանրակրթական դպրոցի հիմնարար դասընթացներից, որի խնդիրը բնավ էլ չի սահմանափակվում բնագավառի վերաբերյալ գիտելիքներ ուսուցանելով, կարողություններ և հմտություններ ձևավորելով ու զարգացնելով: Նեղ իմաստով դպրոցում ստացած պատմագիտական գիտելիքը, պատմությունն ուսումնասիրելու հմտություններն ու կարողություններն ավագ դպրոցի աշակերտի համար հիմք են հանդիսանում բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու դեպքում մասնագիտանալ հասարակագիտական այնպիսի բնագավառներում, ինչպիսին են պատմությունը, արևելագիտությունը, միջազգային հարաբերությունները, իրավագիտությունը, քաղաքագիտությունը, մասամբ՝ բանասիրությունը, աստվածաբանությունը, մշակույթի տարբեր ճյուղերը: Լայն իմաստով պատմության իմացությունը նպաստում է մարդու և ապագա քաղաքացու աշխարհայացքի, նրա քաղաքացիական դիրքորոշման կերտմանը: Պատահական չէ, որ մարդկության անցյալի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումն ուսումնասիրող գիտության՝ պատմության ուսուցումը հանրակրթական դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: Պատմության հիմնարար գիտելիքների տարածման և ամրապնդման հասարակական-քաղաքական նշանակությունը միշտ գիտակցել են անցյալի բոլոր հասարակարգերում՝ այն արտացոլելով պետական տարբեր մոտեցումներում ու քաղաքականության ուղղություններում: Պատմական անցյալի իմաստավորման և մոտեցումների հստակեցման ուղղությամբ գիտամեթոդական աշխատանքը վերջին տասնամյակներում դարձել է ավելի ու ավելի նպատակասլաց և համակարգված: Հետևաբար, «Համաշխարհային պատմություն» դասընթացի բովանդակության մշակման համար հայեցակարգային նշանակություն կարող են ունենալ հետևյալ սկզբունքները.

1. Արդի աշխարհում պատմության բովանդակության հիմնախնդիրը, հանրակրթական դպրոցում դրա դասավանդման հիմնական գաղափարական հայեցակարգի համար պայքարն ընդունել է միջազգային բնույթ, առանձին դեպքերում դարձել միջպետական հարաբերությունների քննարկման առարկա: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի հայեցակարգի մշակումը պետք է բխի մեր երկրի և պետության աշխարհաքաղաքական իրավիճակից, ինչպես նաև նրա արտաքին քաղաքականության ռազմավարական կողմնորոշումներից:

2. Պատմությունը հասարակական-քաղաքական գիտություն է, որն առավել, քան հումանիտար որևէ այլ գիտություն, փոխադարձ ամուր կապի մեջ է հասարակության քաղաքական մտածողության հետ, մշտապես ենթակա է նրա զգայուն արձագանքներին: Բացի այդ՝ պատմագիտությունը գտնվում է անընդմեջ զարգացման գործընթացում: Ուստի առարկայի հայեցակարգը պետք է ունենա կայուն գիտական հիմք:

3. Հայեցակարգի մշակման հիմքում պետք է ընկած լինի տվյալ առարկայի բովանդակության և դասավանդման ուղղությամբ կուտակված գիտամեթոդական դրական փորձը:

4. Համաշխարհային պատմության հանրակրթական հսկայական նշանակության գիտակցումը ևս անհրաժեշտ պայման է ընդհանուր հայեցակարգի մշակման գործում: Պետք է նկատի ունենալ, որ պատմությունը մի գիտություն է, որը միշտ էլ ունեցել է հասարակական բազմաշերտ սպառում: Ընդմին, հասարակական այդ սպառումը, որը սկսվում է հանրակրթական դպրոցից, ունի անընդմեջ բնույթ:

5. «Համաշխարհային պատմությունն» ավագ դպրոցում միջանկյալ օղակ է պարտադիր հիմնական դպրոցում և բուհում տվյալ առարկան դասավանդելու ձևերի, մեթոդների և բովանդակության միջև: Այն հանդիսանում է հիմնական դպրոցի շարունակությունը, բայց և մասնագիտական կրթության նախաշեմը: Հետևաբար, նրա խնդիրն է` խորացնել հիմնական դպրոցում աշակերտի ստացած գիտելիքները, զարգացնել նրա կարողություններն ու հմտությունները` ուղղորդելով դրանք դեպի սովորողի մասնագիտական կողմնորոշվածությանը, հավակնություններին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող բուհական կրթության բնագավառը:

6. Պատմությունն աշխարհայացք ձևավորող գիտություն է, հանգամանք, որը ևս պետք է հաշվի առնել առարկայի գիտական հայեցակարգի մշակման գործում:

«Համաշխարհային պատմություն» առարկայի դպրոցական դասընթացի բովանդակային գիտական առանցքը, որպես ընդհանուր հայեցակարգի բաղկացուցիչ մաս, պետք է հանգի հետևյալ գլխավոր դրույթներին.

ա. Յանկացած գիտության նպատակը ճշմարտության վերհանումն է, որն էլ օգնում է մարդուն, ազգին և պետությանը բարգավաճելու: Սովորողներին հաղորդել միայն պատմական ճշմարտությունը, իրականը: Ճշմարտության օրենքներով ապրող սովորողը կունենա առողջ դատողություն:

բ. Պատմական ժամանակաշրջանների գլխավոր դեպքերը, գործընթացները և երևույթները բացատրել և հիմնավորել նախևառաջ քաղաքակրթական արժևորումներով:

գ. Համաշխարհային քաղաքակրթական գործընթացներում վճռական գործոն համարել ազգային քաղաքակրթական նվաճումները: Ընդմին` հայկականը դիտարկել որպես միջքաղաքակրթական (թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային առումներով) մի ուրույն աշխարհ, որը որոշակի ներդրում ունի համաշխարհային պատմության կերտման գործում:

դ. Հրաժարվել հասարակական-տնտեսական կացութաձևերի մասին մարքսիստական ուսմունքից, որի օգնությամբ միշտ չէ, որ հնարավոր է բացահայտել պատմական ճշմարտությունը:

ե. Ներազգային ընկերային պայքարը պատմական գործընթացներում համարել ոչ թե վճռորոշ, այլ ածանցյալ գործոն, որը միշտ նպատակաուղղված է հասարակության նորացմանը: Համաշխարհային պատմության գործընթացներում ամենավճռական

ընկերային գործոն համարել ազգը, նրա հասարակական կառույցները և անընդմեջ պայքարը հանուն գոյատևման ու բարգավաճման:

գ. Համաշխարհային պատմության դասընթացում գլխավոր ուշադրությունը դարձնել պատմական զարգացման տվյալ փուլում առաջին գծում գտնվող ազգերին և հասարակություններին: Միևնույն ժամանակ անդրադառնալ Հայաստանին հարևան ժողովուրդների և պետությունների պատմությանը:

է. Հայոց և Համաշխարհային պատմության գործընթացները վերլուծել և ներկայացնել մեկ պատմական ամբողջության մեջ, միասնական հայեցակարգի շրջանակում, ինչը չի հակասում դրանք տարբեր դասընթացներով դասավանդելու իրողությանը:

Համաշխարհային պատմության դպրոցական դասընթացի դասավանդման տեղն ու դերը հանրակրթության համակարգում, ինչպես նաև ուսումնական նյութի ծավալի որոշումը և դասավանդման մեթոդիկան նույնպես կարիք ունեն հայեցակարգային հստակեցման: Այդ առումով կարևոր է հետևյալ մոտեցումների պահպանումը.

1. Համաշխարհային պատմության դասընթացը համարել հանրակրթության անկապտելի մասը, առանց որի անհնարին է լիարժեք միջնակարգ (մասնավորապես՝ պատմագիտական) կրթությունը:

2. Հնարավորինս հստակեցնել հանրակրթական մյուս առարկաների հետ «Համաշխարհային պատմության» միջառարկայական կապերը: Դրանցում էական են առնչությունները բնագիտամաթեմատիկական առարկաների, աշխարհագրության (պատմական և արդի քաղաքական աշխարհագրություն), լեզուների (օտարալեզու պատմական սկզբնաղբյուրների և աշխատությունների օգտագործում, բառապաշարի հարստացում, գիտական տերմինների բացատրություն), իրավագիտության (պետության և իրավունքի պատմություն), հասարակագիտական այլ դասընթացների հետ:

3. Շատ կարևոր է պատմագիտական կրթության հաջորդականության ապահովումը միջին և ավագ դպրոցներում, որը հնարավորություն կտա պահպանել գիտականությունը, ինչպես նաև նպաստել սովորողների պատմական մտածողության ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը:

4. Պատմության յուրաքանչյուր դաս պետք է լուծի որոշակի ուսումնադաստիարակչական խնդիր, որի հստակեցումը դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հիմնախնդիրն է:

Հանրակրթական դպրոցում պատմագիտական կրթության էությունը կազմում են այն հիմնական բովանդակային ուղղությունները, որոնք, պատմության ճանաչողության մեթոդաբանության համաձայն, որոշում են գիտելիքների համակազմը, դրանց ներկայացման և յուրացման մակարդակը, ինչն անհրաժեշտ է ուսումնական գործընթացի ամբողջականության ապահովման համար: Այդպիսի բովանդակային ուղղություններ կարելի է համարել պատմական ժամանակը, պատմական տարածությունը, պատմական զարգացումը, որը տեղի է ունենում դեպքերի պատճառահետևանքային կապերի հիման վրա:

- Պատմական ժամանակ.

Տարիների հաշվումը պատմության մեջ և պատմական դեպքերի ու գործընթացների պարբերացումը, պատմական իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունն ու տևողությունը, պատմական իրադարձությունների համընթացությունը՝

- Պատմական տարածություն.

Պատմական զարգացման աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկ) գործոնները, պատմական որոշ գործընթացների տեղայնությունն ու համընդհանրությունը (գլոբալությունը)

- Պատմական զարգացում (առաջադիմություն և հետընթաց), ինչը ներկայացվում է հետևյալ կողմերով.

- մարդաբանական, այսինքն՝ մարդու և մարդկային հասարակության ծագումը և զարգացումը.
- հոգեբանական, այսինքն՝ անհատի ձևավորումը և նրա դերը տարբեր պատմական դարաշրջաններում, մարդկանց գործողությունների դրդապատճառները պատմության մեջ.
- ֆորմացիոն, այսինքն՝ մարդկանց աշխատանքային գործունեության էվոլյուցիան, նյութական արտադրության զարգացումը և արտադրական հարաբերությունների փոփոխությունը.
- մշակութաբանական, այսինքն՝ առաջին հերթին հոգևոր, ինչպես նաև նյութական մշակույթի զարգացումը, ժողովուրդների մշակույթի, աշխարհի քաղաքակրթությունների հաջորդայնությունն ու փոխազդեցությունը.
- էթնոազգային, այսինքն՝ էթնիկ ընդհանրությունների ձևավորումն ու դրանց զարգացման գործընթացը տարբեր պատմական դարաշրջաններում.
- պետական-քաղաքական, այսինքն՝ պետականության սկզբնավորումն ու զարգացումը, տարբեր երկրների քաղաքական պատմության հիմնական միտումները.
- աշխարհաքաղաքական, այսինքն՝ տարբեր երկրների, ժողովուրդների, քաղաքակրթությունների փոխհարաբերությունների պատմությունը,պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը.
- սոցիալական, այսինքն՝ հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորումն ու զարգացումը, սոցիալական շարժումները պատմության մեջ.
- փիլիսոփայական, այսինքն մարդու կողմից շրջակա աշխարհի ճանաչողության պատմությունը, կրոնական և հասարակական ուսմունքները.
- արժեքաբանական, այսինքն՝ ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը հասարակության մեջ:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հանրակրթական ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքային դասարաններում «Համաշխարհային պատմության» դասավանդման նպատակներն են.

- սովորողների կողմից համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներին տիրապետումը.
- ըստ առանձին տարածաշրջանների ու երկրների՝ մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել մշակույթի զարգացման և քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ.
- սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորում աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Ելնելով վերը նշված նպատակներից՝ դպրոցում պատմագիտական կրթության համար առաջնային են համարվում հետևյալ խնդիրները.

ա - սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության մեջ եղած կարևորագույն իրադարձությունների, երևույթների, գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ՝ ըստ հասարակության կենսագործունեության բոլոր հիմնական ուղղությունների.

բ- սովորողների մեջ զարգացնել ընդհանուր ուսումնական և պատմության ուսումնասիրությանն ուղղված առանձին կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն պատմությունից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար.

գ- նպաստել սովորողի՝ իբրև անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, որը գիտակցում է հիմնարար հոգևոր արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության բարձրացմանը.

դ- սովորեցնել պատճառահետևանքային կապեր գտնել պատմական գործընթացներում, հասկանալ ու բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքը, բնույթն ու առանձնահատկությունները պայմանավորող գործոնները:

ե- սովորեցնել գնահատել ու արժևորել հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

## ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** «Համաշխարհային պատմություն» առարկայի բովանդակությունը ավագ դպրոցում, դասավանդման նպատակները և խնդիրները: Պատմության պարբերացումը: Համաշխարհային պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը: Քաղաքակրթություն հասկացությունը: Քաղաքակրթության ակունքներում. «նեոլիթյան հեղափոխություն»:

### ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին պետությունները Միջագետքում և Եգիպտոսում: Արևելամիջերկրածովյան քաղաք-պետությունները: Հնդկաստան: Չինաստանի վաղ պետությունները:

Քաղաքակրթությունների վերելքը Արևելքում (Եգիպտոսի Հին, Միջին և Նոր թագավորությունները, Աքքադ, Խեթական տերությունը, Միտաննի, Միջին ասորեստանյան թագավորություն): Միջազգային հարաբերությունները Ք.ա. III- Ք. ա. II հազարամյակներում: «Համաշխարհային» պետություններ (Նոր ասորեստանյան տերությունը, Աքեմենյան տերությունը):

### ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքակրթությունների կազմավորումը Արևմուտքում: Հունական աշխարհը Ք.ա. III- Ք. ա. II հազարամյակներում. Կրետե-միկենյան քաղաքակրթությունը: «Հոմերոսյան» դարաշրջանը: Առաջին պետությունները (վաղ հունական պոլիս, գաղութային պոլիսները, Իտալիայի էտրուսկյան քաղաքները): Հունական պոլիսի էությունը և առանձնահատկությունները: Աթենքը Ք. ա. VIII – VI դարերում: Սպարտա:

Քաղաքակրթությունների վերելքը Արևմուտքում: Հույն-պարսկական պատերազմները: Աթենական պետությունը Ք.ա. V դարում: Պելոպոնեսյան պատերազմները: Պոլիսի ճգնաժամը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և հելլենիստական պետությունների ձևավորումը:

Իտալիան Ք.ա.II հազարամյակում և Ք. ա. I հազարամյակի սկզբին: Հռոմեական հանրապետությունը Ք.ա. V-I դարերում. Իտալիայի նվաճումը, Պունիկյան պատերազմները: Հռոմի նվաճումներն Արևելքում: Հռոմը Կենտրոնական Եվրոպայում: Հանրապետության կարգի ճգնաժամը: Օգոստոսի պրինցիպատը: Հռոմեական կայսրությունը Ք. ա. I դարից մինչև Ք. ծ. հ. III դարը:

### ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հին հասարակությունները (Եգիպտական հասարակությունը, Հնդկական կաստաները, Սպարտայի հասարակությունը): Ազատ մարդ: Ստրուկ: Քաղաքակիրթ աշխարհը և բարբարոսական ծայրագավառը:

Հոգևոր մշակույթը: Գիր. պատկերագիր-գաղափարագիր, սեպագիր, եգիպտական հիերոգլիֆային գիր: Գրականությունը: Գիտությունը: Արվեստը: Կրոնը. բազմաստվածության ավարտը, համաշխարհային կրոններ:

### ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

Քաղաքակրթությունների խաչմերուկում: Հունականացումը: Հելլենիզմ: Հռոմը և Արևելքի երկրները: Հռոմը և Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները: Եվրոպայի հռոմեականացումը:

Հին աշխարհի ավարտը: Հռոմեական կայսրության թուլացումը: Արևմտյան և Արևելյան հռոմեական կայսրությունները: Արևելքի երկրները հելլենիստական դարաշրջանի ավարտին: «Բարբարոսական Եվրոպայի» ժողովուրդները Ք.ա. I – Ք. ծ. հ. IV դարերում: Հնդկաստանը և Չինաստանը նոր հազարամյակի սկզբներին:

## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** Համաշխարհային պատմության միջնադարյան շրջանի քաղաքակրթությունները: Պատմական գործընթացի հիմնական առանձնահատկությունները և արդյունքները Եվրոպայում, Արևելքում և Ամերիկայում:

### ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները: Հռոմեական և «բարբարոսական» քաղաքակրթությունների համադրումը: Միջնադարի ձևավորման ներքին ճանապարհը: Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակները: Վաղ միջնադարի սոցիալական միջավայրը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Հասարակության սոցիալական կառուցվածքը: Ավատատիրական աստիճանակարգությունը:

Պետությունը վաղ միջնադարում: Իշխանության կազմակերպումը: Իրավունքը: «Սալիական դատաստանագիրքը»: Պայքար Արևմտյան հռոմեական կայսրության ժառանգության համար: Կառլոս Մեծի կայսրությունը: Սրբազան հռոմեական կայսրություն:

Քրիստոնեական եկեղեցին վաղ միջնադարում: Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը:

Պապականության առաջացումը: Եկեղեցին Եվրոպայի սոցիալ-քաղաքական կյանքում: Հերետիկոսական շարժումները: Վաղ միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Պատմագրություն: Գրականություն: Արվեստ:

Բյուզանդիան V-VIIIդդ.: Ավատատիրություն: Բյուզանդական քաղաքակրթության ձևավորումը: Կայսերական իշխանությունը: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: Արաբա-բյուզանդական հակամարտությունը: Պատկերամարտություն:

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Դասական միջնադարը Արևմտյան Եվրոպայում: Խաչակրության դարաշրջանը: Խաչակրության արդյունքները և հետևանքները:

Սոցիալական միջավայրի վերակառուցումը: Գյուղատնտեսությունը: Միջնադարյան քաղաքների առաջացումը: Արհեստը և առևտուրը: Մանուֆակտուրա:

Դասային միապետության առաջացումը: Ավատատիրական հասարակության դասերի ձևավորման ավարտը: Անգլիական խորհրդարանը: Գլխավոր շտատները Ֆրանսիայում: Ազգային պետությունների ձևավորումը: Ֆրանսիա: Անգլիա: Գերմանիա: Իսպանիա: XIVդ. ճգնաժամը: Պապականության անկումը: Գյուղացիական ապստամբությունները:

Միջազգային հարաբերությունները Եվրոպայում: Հարյուրամյա պատերազմը:

Դասական միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Համալսարաններ: Նոր մշակույթի ծրագիրը: Հումանիստական գաղափարախոսության ձևավորումը: Պատմագիտության տեղը նոր աշխարհընկալման մեջ: Վաղ Վերածնունդը Իտալիայում: Նոր աշխարհայացքի ձևավորումը:

Բյուզանդիան IX-XVդդ.: Մակեդոնական Վերածնունդը: Խաչակրաց արշավանքները և Բյուզանդիան: Գաղափարաքաղաքական պայքարը Բյուզանդիայում: Բյուզանդական կայսրության անկումը: Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները: Վաղ Բյուզանդական մշակույթը: Դասական շրջանի մշակույթը:

Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում: Վաղ սլավոնական ցեղերը: Սոցիալական միջավայրը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Պետության կազմավորումը և զարգացումը: Սլավոնները և Բյուզանդիան: Ռուսիայի քրիստոնեացումը: «Ռուսիայից Ռուսաստան»: Ռուսական մշակույթը:

## ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունները: Հինդու քաղաքակրթությունը: Հասարակության սոցիալական աստիճանակարգությունը: Կաստաներ: Պետությունը: Մշակույթը:

Բուդդայականությունը արևելյան քաղաքակրթություններում: Չինաստանը միջնադարում: Սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները: Հասարակության քաղաքական կազմակերպումը: Կայսերական իշխանությունը: Մշակույթը:

Ճապոնիան միջնադարում: Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Կառավարման համակարգը: Մշակույթը:

Իսլամական քաղաքակրթությունը: Իսլամական քաղաքակրթության ձևավորումը: Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Խալիֆի իշխանությունը: Մշակույթը:

Իրանական քաղաքակրթությունը միջնադարում: Իրանը Սասանյանների օրոք: Իսլամի հաստատումը Իրանում: Միասնական պետության վերականգնումը:

Քոչվորական քաղաքակրթություններ: Քոչվորական քաղաքակրթության առանձնահատկությունները: Սելջուկ-թուրքեր: Մոնղոլական կայսրությունը: Օսմանյան տերություն:

Մինչկոլումբոսյան Ամերիկա: Ացտեկների, մայաների և ինկերի պետությունները: Սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները: Պետությունը: Մինչկոլումբոսյան Ամերիկայի մշակույթը:

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

Միջնադարյան քաղաքակրթության անկումը: Աշխարհագրական մեծ հայտագործությունները և դրանց հետևանքները: Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը: Կապիտալի նախասկզբնական կուտակումը: Տնտեսության զարգացումը: Բացարձակ միապետության առաջացումը:

Ռեֆորմացիոն շարժումը: Ռեֆորմացիայի զարգացումը: «Թագավորական ռեֆորմացիան» Անգլիայում: Հուգենոտյան պատերազմները Ֆրանսիայում:

Նիդերլանդական հեղափոխությունը: Երեսնամյա պատերազմը, Նոր Եվրոպայի ծնունդը:

Արևմտյան Եվրոպայի մշակույթը XVI դարում: Նոր գիտության ծնունդը: Քաղաքական մտքի զարգացումը: Վերածննդի մշակույթը:

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII ԴԱՐ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Աշխարհը Նոր ժամանակների սկզբին: Աշխարհի երկրներն ու ժողովուրդները XVI – XVII դարերում: Եվրոպական պետությունները: Ասիայի երկրների հասարակական-քաղաքական կացությունը: Արդյունաբերական արտադրության աճը: Փոփոխություններ հասարակության սոցիալական համակարգում: Առևտրի զարգացումը:

Մարդկանց ապրելակերպը: Կրթական մակարդակը: Քաղաքային և գյուղական կյանքը: Նորաձևությունը:

Միահեծանությունը Եվրոպայում XVI-XVII դարերում: Միահեծանության գաղափարական հիմնավորումը: Միահեծանության առանձնահատկությունները Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում: Միահեծանությունը Ռուսաստանում:

Եվրոպական քաղաքակրթության զարգացումը: Արդյունաբերական հեղաշրջումը: Մանուֆակտուրային արտադրության զարգացումը XVII – XVIII դարերում: Արտադրողականության աճը: Ներքին և արտաքին առևտրի զարգացումը:

Անցումը մանուֆակտուրայից մեքենայական արտադրության: Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում: Արդյունաբերական հեղաշրջումը եվրոպական մյուս երկրներում: Արդյունաբերական հեղաշրջման ընկերային (սոցիալական) հետևանքները: Նոր դասակարգերի և խմբերի ձևավորումը: Ջեռներեց-կապիտալիստների դարաշրջանը: Քաղաքային մշակույթի վերելքը: Բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Սոցիալական օրենսդրության ամրապնդումը:

Խոշոր արտադրության աճը Եվրոպայում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Գիտատեխնիկական առաջընթացը: Արտադրության խոշորացման պատճառները: Մոնոպոլիստական կապիտալիզմը: Եվրոպայի տնտեսական վերելքը: Միջազգային շուկայի ձևավորումը: Միջազգային հաղորդակցության ուղիների և միջոցների զարգացումը: Համաշխարհային առևտուրը XX դարի սկզբին:

Քաղաքական կյանքի զարգացումը Եվրոպայում: Ժողովրդավարական պետության ձևավորման գործընթացը: Լուսավորական գաղափարների տարածումը: Սահմանադրական կարգի հաստատման միտումները և արդյունքները:

Սահմանադրական կարգի հաստատման անգլիական ուղին: 1640-1660թթ. հեղափոխությունը: Գաղափարական հոսանքները: Ներքաղաքական պայքարը Անգլիայում 1660-1688թթ.: «Փառահեղ հեղափոխությունը»: Սահմանադրական օրենքները: Պայքար ընտրական իրավունքի համար XIX դարում: Չարտիստական շարժումը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը: Հասարակության ազատականացման օրենքները:

Սահմանադրական կարգի հաստատման ֆրանսիական ուղին: Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը՝ սահմանադրական կարգերի հաստատման սկիզբ: «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», 1791թ. սահմանադրությունը: Երկրորդ հանրապետությունը: Երկրորդ կայսրության սահմանադրական կարգը: Հանրապետական շարժումը: Սահմանադրական կարգի ամրապնդումը Երրորդ հանրապետության շրջանում: Պայքար հանրապետության ժողովրդավարացման համար:

Սահմանադրական կարգի հաստատման գերմանական ուղին: Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը: Միասնական պետության ստեղծումը: Գերմանական կայսրության պետական կարգը: Քաղաքական կյանքի զարգացումը:

Ավստրո-Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն: Երկմիասնական պետության սահմանադրությունը: Ազգային հիմնախնդիրը Ավստրո-Հունգարիայում:

Սահմանադրական կարգի հաստատումը Իտալիայում: Ազգային ինքնագիտակցության վերելքը XIX դարի կեսին: Միասնական պետության ստեղծումը: Իտալական թագավորության սահմանադրական կարգը: Վատիկանը՝ Իտալիայի հասարակական-քաղաքական կյանքում:

Սահմանադրական պետությունների առաջացումը Բալկանյան թերակղզում: Ինքնիշխան ազգային պետությունների ստեղծման նախադրյալները: Նորանկախ պետությունների սահմանադրությունները:

Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին: Հասարակության նորացման՝ Պետրոս Մեծի ծրագիրը: Զարգացման ուղու ընտրությունը. Եվրոպա, թե Ասիա: Հասարակական հոսանքներ՝ սլավոնասերներ, արևմտականներ, հեղափոխականներ: Ազատական բարեփոխումները 1860-70-ական թվականներին: Ռուս նարոդնիկությունը: Սոցիալ-դեմոկրատական շարժումը: Սահմանադրական կարգի ստեղծման փորձը XX դարի սկզբին: Քաղաքակրթական փոխազդեցությունները Ռուսաստանի ազգային շրջաններում: Ազգային հարցը Ռուսական կայսրությունում:

Նոր ժամանակների քաղաքական-գաղափարական հիմնական ուղղությունները: Լիբերալիզմ. հիմնական գաղափարները: Ազգայնականության երևան գալու պատճառները, դրսևորման ձևերը: Պահպանողականություն. առաջացման պատճառները, բնորոշ գծերը: Սոցիալիզմ: Սոցիալ-դեմոկրատական շարժումը, կուսակցությունների առաջացումը:

Արդյունաբերական հասարակության ձևավորման ամերիկյան ուղին: Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութները XVII-XVIII դարերում: Ամերիկյան լուսավորականությունը: ԱՄՆ-ի ձևավորումը, սահմանադրությունը: ԱՄՆ-ի քաղաքական զարգացումը. XIX դարի կեսեր - XX դարի սկիզբ: Քաղաքացիական պատերազմը և ստրկության վերացումը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը: Ամերիկյան ժողովրդավարությունը: ԱՄՆ-ի տնտեսական հզորացման նախադրյալները: Տնտեսության զարգացման արդյունքները XX դարի սկզբին:

Անկախ պետությունների առաջացումը Լատինական Ամերիկայում: Նորանկախ երկրների պետական կարգը: Լատինաամերիկյան ազգերի կազմավորումը:

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արևելքի երկրները: Օսմանյան տերության զարգացման առանձնահատկություն-ները: Թանզիմաթյան բարեփոխումների առաջին փուլը: «Նոր օսմանների» շարժումը և սահմանադրության ընդունումը: Թանզիմաթի երկրորդ փուլը: Երիտթուրքական շարժումը: 1908-1909թթ. հեղաշրջումը: Երիտթուրքերի կառավարումը 1908-1914թթ.:

Արաբական երկրները (XIX դար - XX դարի սկիզբ): Եվրոպական երկրների տնտեսական ներթափանցումը արաբական երկրներ: Արաբական ազգայնականության առաջացումը:

Իրանի հասարակական-քաղաքական կացությունը ( XVIII դար – XX դարի սկիզբ): Անգլո-ռուսական մրցակցությունը Իրանում XIX դարի առաջին կեսին: 1905-1911թթ. հեղափոխությունը Իրանում:

Չինաստանը XIX դարի երկրորդ կեսին-XX դարի սկզբին: Չինական քաղաքակրթության ճգնաժամը: Արդյունաբերական երկրների ներթափանցումը Չինաստան: Հասարակական-քաղաքական կարգի բարեփոխման փորձերը: 1911-1912 թվականների հեղափոխությունը Չինաստանում:

Արդյունաբերական քաղաքակրթության առաջացումը Ճապոնիայում: Սահմանադրական կարգերի ստեղծումը: Ճապոնիան XX դարի սկիզբին: Ճապոնիայի ռազմականացումը:

Համաշխարհային գաղութային համակարգը: Գաղութային նվաճումները Ասիայում և Աֆրիկայում: Համաշխարհային գաղութային համակարգի կազմավորման ավարտը (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ):

## ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային հարաբերությունները (XVII դարի երկրորդ կես - XVIII դարի 80-ական թվականներ): Միջազգային հարաբերությունները ֆրանսիական Մեծ հեղափոխության դարաշրջանում: Միջազգային հարաբերությունները 1814-1860-ական թվականներին: Վիեննայի համակարգի ստեղծումը, «Սրբազան դաշինքի» գործունեությունը: Վիեննայի համակարգի ճգնաժամը:

Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջին - XX դարի սկզբին: Միջազգային հասարակական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը: Աշխարհաքաղաքական փոխոխությունները: Երկու հակադիր խմբավորումների ձևավորումը. Եռյակ դաշինք, Անտանտ: ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական նպատակները, համաամերիկյան գաղափարխոսությունը:

Պատերազմները միջազգային հարաբերությունների համակարգում: Պատերազմների գաղափարական հիմնավորումները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Եվրոպան: Ռուս-ճապոնական պատերազմը: 1912-1913թթ. բալկանյան պատերազմները:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները, սկիզբը: Պատերազմող տերությունների ռազմաքաղաքական ծրագրերը: Պատերազմի գլխավոր ռազմաբեմերը: Աշխարհամարտի կովկասյան ճակատը: Օսմանյան կայսրության պանթուրքական ծրագրերը գործողության մեջ. Հայոց Մեծ եղեռնը:

Քաղաքական ճգնաժամը Ռուսաստանում: Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները: Խորհրդային Ռուսաստանը՝ սոցիալիզմի առաջին երկիր: Ռուսաստանի դուրս գալը պատերազմից: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլը: Պատերազմի հետևանքները:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Վերածննդի մշակույթի հետևանքները: Գիտական աշխարհընկալման զարգացումը XVII - XVIII դարերում, նշանավոր գիտնականները: Լուսավորական շարժումը: Հասարակագիտական միտքը: Գրականությունը և արվեստը: Գիտության վերելքը XIX դարի առաջին կեսին:

Մշակույթի վերելքի նախադրյալները XIX դարի երկրորդ կեսին – XX դարի սկզբին: Կրթական համակարգը: Գիտության զարգացումը: Գրականությունը: Արվեստը:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** Աշխարհի զարգացման գլխավոր միտումներն ու արդյունքները: Հետարդյունաբերական հասարակությունը: Հասարակական առաջընթացի հեռանկարները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Առաջին աշխարհամարտի արդյունքների ամփոփումը. Վերսալ – վաշինգտոնյան պայմանագրերը: Աշխարհի քաղաքական նոր վերաբաժանումը: Նորանկախ պետությունները: Գաղութային տիրապետության նոր ձևի՝ կառավարման մանդատային համակարգի հաստատումը: Ազգերի լիգայի ստեղծումը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգը:

Հասարակական զարգացման հիմնական ուղղությունները հետպատերազմյան ժամանակաշրջանում: Եվրոպակենտրոն աշխարհ: Գաղափարական և քաղաքական

նոր ուղղությունների ձևավորումը: Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի կայացումն ու հոգևոր ճգնաժամի խնդիրը:

Ամբողջատիրական վարչակարգերը: Ֆաշիստական վարչակարգերը Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում: Միլիտարիստական Ճապոնիան: Ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերը ԽՍՀՄ-ում, Թուրքիայում, Իրանում, Լատինական Ամերիկայի երկրներում:

Արևմտյան ժողովրդավարության երկրները՝ Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ: Նոր պետությունների կայացման գործընթացն Արևելյան Եվրոպայում: Քաղաքական համակարգի ընտրությունը:

Սոցիալ-տնտեսական կյանքը 1920-1930-ական թվականներին: Տնտեսության տարածները: Կապիտալիզմի բարգավաճման ժամանակաշրջանը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Նէպ-ը Խորհրդային Ռուսաստանում: Պլանային տնտեսությունը: Սոցիալիզմի կառուցման խորհրդային մոդելը:

Արևելքի երկրները: Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական նոր քարտեզի ձևավորումը: Արաբական աշխարհը և նրա զարգացման ուղիները: Քեմալական Թուրքիան: Իրանի քաղաքական համակարգն ու արտաքին քաղաքականությունը: Ճապոնիայի, Չինաստանի և Հնդկաստանի արդիականացման գործընթացը:

Միջազգային հարաբերությունները: Ազգերի լիգայի գործունեությունը: Խաղաղասիրական միտումներն ու հավաքական անվտանգության խնդիրը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Հակամարտ խմբավորումների ձևավորումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը: Պատերազմի պատճառները, սկիզբը, փուլերը: Գերմանիայի հարձակումը Խորհրդային Միության վրա: Հակահիտլերյան խմբավորման ստեղծումը: Թեհրանի խորհրդաժողովը: Յալթայի խորհրդաժողովը: Պոտսդամի խորհրդաժողովը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը, հետևանքները:

## ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Միջազգային իրադրությունը հետպատերազմյան շրջանում, հակասությունների սրումը նախկին դաշնակիցների միջև: Սառը պատերազմի սկիզբը: Աշխարհի բաժանումը երկու ռազմաքաղաքական համակարգերի՝ ՆԱՏՕ և Վարշավայի պայմանագիր: Սպառազինությունների մրցավազքը: Տարածաշրջանային հակամարտությունները:

Երեք աշխարհ: Երկբևեռ աշխարհի ձևավորումը: Երրորդ աշխարհի ձևավորումը: Արևմտյան աշխարհի զարգացումն ու ներքին հիմնախնդիրները: Արևմուտքի երկրների գաղափարա-քաղաքական հոսանքներն ու քաղաքական կուսակցությունները: ԱՄՆ-ը՝ գերտերություն: Արևմուտքի երկրները:

Սոցիալիստական ճամբարի ձևավորումը: ԽՍՀՄ –ը՝ գերտերություն: Սոցիալիզմի աշխարհի ներքին հիմնախնդիրներն ու սոցիալիստական հասարակության բարեփոխման փորձերը: Արևելաեվրոպական սոցիալիզմի ձախողումը:

«Երրորդ աշխարհի» երկրների զարգացման ուղիները (Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրները):

Միասնացման միտումներն ու միջազգային կառույցները: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծումն ու գործունեությունը: Եվրոպական ինտեգրացիան: Համաամերիկյան ինտեգրացիան: Ինտեգրացիոն միտումներն ու կառույցները արաբական աշխարհում: Գաղութային կայսրությունների փլուզումն ու հետկայսերական աշխարհի ձևավորումը: ԱՊՀ ստեղծումը:

Տնտեսական զարգացման ուղիները: Տնտեսական համագործակցության ամրապնդումը աշխարհի պետությունների միջև: ԱՄՆ-ի տնտեսական հզորացման պատճառները: Մարշալի պլանն ու արևմտաեվրոպական պետությունների տնտեսական զարգացման մոդելները. գերմանական և իտալական «հրաշքը»: Բարեկեցության պետությունն ու զարգացման «շվեդական» մոդելը:

ՏՓԽ-ն և սոցիալիստական ճամբարի երկրների տնտեսությունը:

Արևելյան և Հարավային Ասիայի երկրների տնտեսական առաջընթացի պատճառները:

Արևելքի երկրները 20 - րդ դարի երկրորդ կեսին: Արաբական աշխարհի երկրները: Իսրայելը և պաղեստինյան խնդիրը: Թուրքիան: Իրանը: Չինաստան. սոցիալիզմի չինական մոդելը: Հնդկաստանի արդիականացումը: «Ճապոնական» հրաշքը:

Արդյունաբերական հասարակության դարաշրջանի ավարտը: Գիտատեխնիկական հեղափոխությունը. նախադրյալները, փուլերը, արդյունքները: Հետարդյունաբերական հասարակության ձևավորումը: Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները:

## ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Քաղաքական նոր իրադրությունն աշխարհում: Սառը պատերազմի ավարտը: Նոր աշխարհակարգը: ԽՍՀՄ-ի փլուզումը և նորանկախ պետությունների առաջացումը: Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը:

ՆԱՏՕ-ն և բալկանյան ճգնաժամը: Ուժերի նոր հարաբերակցությունը: Քուվեյթի ճգնաժամն ու հակաիրաքյան պատերազմները:

Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրը: Ազգային ինքնորոշումն ու չճանաչված պետությունները: Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը: Միասնական միջազգային օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը:

Արդի համաշխարհային զարգացման հիմնախնդիրները: Ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններն ու շրջակա միջավայրի խնդիրը: Տարածքային հիմնախնդիրները: Պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը: Կրոնական գործոնի ակտիվացումը: Համաշխարհայնացման գործընթացը: Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում:

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մշակութային զարգացման գլխավոր միտումները և նվաճումները: Կրթական համակարգի զարգացումը: Գիտատեխնիկական հեղափոխությունը և ժամանակակից աշխարհը: Գրականությունը: Արվեստը: Մշակութային կյանքի համաշխարհայնացումը: Փոփոխությունները մարդկանց ապրելակերպում:

# ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

«Համաշխարհային պատմության» դասընթացը ավագ դպրոցում բաղկացած է տեսությունից, գործնական աշխատանքներից, ցուցադրումներից (էքսկուրսիաներից):

Բոլոր հոսքերի համար տրվում են գործնական աշխատանքների, ցուցադրումների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն ու անհատական աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ):

Բոլոր հոսքերում հանձնարարվում է վերլուծել տեսական բնույթի խնդիրներ, առօրյա կյանքից վերցված օրինակներ, որոնց հիման վրա կազմակերպվող քննարկումները, ընդհանրացումները, բանավեճերը և գնահատումները մեծապես կնպաստեն սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը և տրամաբանական մտածողության զարգացմանը:

Ուսուցման ընթացքում, կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դրա առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում
- ուսումնական նյութի լուսաբանում
- աշխատանք դիդակտիկ նյութերի հետ (մոդելներ, քարտեզներ, ֆիլմեր, լուսանկարներ, մշակութային արժեքների ցուցանմուշներ)
- պատմական սկզբնաղբյուրների և լրացուցիչ պատմագիտական գրականության ուսումնասիրում, գործնական աշխատանքների կատարում
- հիմնահարցերի հետազոտություն, գործնական աշխատանքների կատարում
- իրավիճակների և արդյունքների վերլուծում
- գրավոր աշխատանքների կատարում
- բանավոր և գրավոր հարցումների, թեստային աշխատանքների անցկացում
- անհատական, խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Դասընթացում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը ինչպես տարբեր պատմական երևույթները համակողմանի ընկալելու, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու առումով, այնպես էլ ուսուցման պրոցեսն արդի պահանջներին համապատասխան և արդյունավետորեն կազմակերպելու նպատակով:

Նշենք, որ խորացված ուսուցմամբ հոսքային (տարբերակված) դասարաններում առավել նախընտրելի են ուսումնառության այն տարատեսակները և միջոցները, որոնք խթանում են սովորողների ինքնուրույն, հետազոտական աշխատանքը, նպաստում են վերլուծական կարողությունների զարգացմանը, սովորողին նախապատրաստում բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության համար:

## ՍՈՎՈՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ
**Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**
**Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է.**

| Ա մակարդակ | Բ մակարդակ |
|---|---|
| Իմանա<br>-մարդկության պատմության վաղ ժամանակների,<br>-քարի, պղնձի-քարի և բրոնզի դարաշրջանների,<br>-քարի դարում մարդկանց զբաղմունքի տեսակների, աշխատանքի գործիքների և զինատեսակների աստիճանական փոփոխության, մարդկային հանրության զարգացման, նոր քարի դարից սկսած մարդկանց կյանքում տեղի ունեցած կարևոր փոփոխությունների (անցում նստակեցության, վաղ երկրագործության և անասնապահության սկզբնավորում, մետաղամշակության, բրուտության և այլ արհեստների առաջացում ու հետագա զարգացում և այլն),<br>-կրոնի և արվեստի առաջացման և վաղ քաղաքակրթության ժամանակաշրջանի մասին:<br>-պետության առաջացման,<br>-Հին Արևելքի և Անտիկ աշխարհի երկրների (Հին Եգիպտոս, Միջագետք, Իրան, Հնդկաստան, Հունաստան, Հռոմ և այլն) աշխարհագրության, բնակչության,<br>-տնտեսության առավել զարգացած ճյուղերի (երկրագործություն, անասնապահություն, արհեստներ, առևտուր, շինարարություն և այլն), գրի և գրականության առաջացման և զարգացման, ճարտարապետության, արվեստի և գիտության ձեռքբերումների, կենցաղի ու սովորույթների,<br>-Հին Արևելքի պետությունների, Անտիկ քաղաք-պետությունների, Հելլենիստական պետությունների և Հռոմեական պետության կազմավորման ու պատմական զարգացման, նրանց մղած պատերազմների մասին | Կարողանա<br>- բացատրել և համեմատել՝<br>- նախնադարյան տոհմ, տոհմական և հարևանային համայնք,<br>- հողի ընդհանուր սեփականություն և առանձին հողաբաժին,<br>- վաղ երկրագործություն, անասնապահություն, արհեստագործություն,<br>- կրոնի և արվեստի սկզբնական ձևեր,<br>- վաղ քաղաքակրթություն և պետություն հասկացությունները,<br>- համեմատել Հին Արևելքի և Անտիկ աշխարհի երկրների աշխարհագրական դիրքը, բնական հարստությունները, տնտեսության, արվեստի և գիտության նվաճումները,<br>- բերել տարբեր երկրների և ժողովուրդների միջև տնտեսական, մշակութային կապերի օրինակներ, ուսումնական նյութի հիման վրա մեկնաբանել դրանք:<br><br>Իմանա<br><br>- սոցիալական տարբեր խմբերի (դասեր, կաստաներ) դրությունը հինարևելյան և անտիկ հասարակություններում, ներկայացնել դրանց հարաբերությունները: |

| | |
|---|---|
| Իմանա<br>- միջնադարի, դրա ժամանակագրական սահմանների,<br>- միջնադարում ապրած ժողովուրդների, բնակչության, տարածքների, միջնադարյան երկրների ու պետությունների սահմանների,<br>- միջնադարյան մարդու կենցաղի ու սովորությունների<br>- ասպետության, հոգևորականության և գյուղացիության կյանքի պայմանների մասին,<br>Իմանա<br>-միջնադարում տնտեսության զարգացման, ագրարային և արհեստավորական արտադրության առաջընթացի (բնատնտեսությունից մինչև ապրանքադրամային տնտեսություն, համքարությունից մինչև մանուֆակտուրա),<br>-միջնադարյան քաղաքների, որպես տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոններ, առաջացման ու զարգացման, առևտրի ու փոխանակության ձևավորման,<br>-միջնադարում սոցիալական զարգացման և տարբեր դասերի (հոգևորականներ, ավատատերեր, գյուղացիներ, քաղաքային բնակչություն) դրության,<br>-ավատատիրական աստիճանակարգության (հիերարխիայի) ձևավորման, դրանում հոգևորականության տեղի և դերի,<br>-գյուղացիների հողային և անձնական կախվածության,<br>-գյուղացիական ապստամբությունների,<br>-սենյորների դեմ քաղաքների պայքարի և քաղաք-կոմունայի ձևավորման, բյուրգերության,<br>-պետական-քաղաքական զարգացման (ավատատիրական մասնատվածությունից մինչև կենտրոնացված պետություններ), իշխանության դասային-ներկայա-ցուցչական մարմինների ձևավորման (պառլամենտ, գլխավոր շտատներ, ռայխստագ, սեյմ, կորտեսներ և այլն),<br>-միջին դարերում ժողովուրդների կապերի ու փոխազդեցության,<br>-ժողովուրդների մեծ գաղթի,<br>-Խաչակրաց արշավանքների,<br>-արաբական, թյուրքական և մոնղոլական նվաճումների,<br>-Արևելքի և Արևմուտքի առևտրատնտեսական և մշակութային կապերի մասին | Կարողանա<br>-համեմատել տնտեսական զարգացման առանձնահատկությունները միջնադարյան աշխարհի տարբեր տարածաշրջաններում,<br>-մեկնաբանել սյուզերեն(սենյոր) վասալ փոխհարաբերությունները,<br>- ներկայացնել ավատատիրական պետության ձևերը,<br>- բնութագրել աշխարհիկ իշխանություն ու հոգևոր իշխանություն հասկացությունները,<br>-Ռեֆորմացիա ու Հակառեֆորմացիա հասկացությունները,<br>Բնութագրել<br>-Վերածննդի տարբեր դարաշրջաններն ու ուղղությունները,<br>- միջնադարի առավել նշանավոր պետական, քաղաքական, հոգևոր և մշակութային գործիչներին, նրանց հայացքներն ու գործունեության արդյունքները,<br>Ներկայացնել<br>-միջնադարյան մարդու աշխարհայացքն ու պատկերացումները կյանքի գլխավոր հիմնահարցերի վերաբերյալ<br>Ներկայացնել և բացատրել<br>-ժողովուրդների մեծ գաղթի, Խաչակրաց արշավանքների, արաբական, թյուրքական և մոնղոլական նվաճումների, աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատճառները, ընթացքը, հետևանքներն ու արդյունքները |

| | |
|---|---|
| Կարողանա<br>- վերլուծել Անգլիան ամենազարգացած կապիտալիստական երկիրը դառնալու պատճառները,<br>- բացատրել արդյունաբերական հասարակություն և արդիականացում հասկացությունների բովանդակության կապը,<br>- բացատրել գաղութային համակարգ հասկացությունը,<br>- ներկայացնել գաղութային համակարգի ձևավորումը: | Կարողանա<br>- վերլուծել նոր ժամանակներում գիտության և մշակույթի զարգացման նախադրյալները,<br>- ներկայացնել և բացատրել արդյունաբերական հեղաշրջման էությունը, արդյունաբերական հեղաշրջման սոցիալական հետևանքները: |

| | |
|---|---|
| Իմանա<br>-գաղութային զավթումների պատմությունը, Արևելքի գաղութացված երկրները և դրանց մայր երկրները (մետրոպոլիա):<br>-արդյունաբերական և ավանդական քաղաքակրթությունների բախման պատճառները XIX դարում:<br>Իմանա և օրինակներ բերի<br>-XIX դ. գիտության և տեխնիկայի նվաճումների մասին:<br>-հոգևոր մշակույթի ձեռքբերումները աշխարհի զարգացած երկրներում XIX դարում:<br>Բացատրի<br>-արդյունաբերական հեղաշրջման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը:<br>Ներկայացնի<br>-արդյունաբերական հեղաշրջման դրական արդյունքները: | Բացատրի<br>-«Ճապոնական հրաշքի» էությունը:<br>Մեկնաբանի<br>-հոգևոր մշակույթի դերն արդյունաբերական քաղաքակրթության դարաշրջանում:<br>Վերլուծի<br>-արդյունաբերական հեղաշրջման բացասական հետևանքները: |
| Իմանա և բացատրի<br>-հակաժողովրդավարական և ամբողջատիրական վարչակարգերի առանձնահատկությունները, դրանց դրսևորումները XX դարում,<br>-միջազգային ինտեգրման էությունը, արդյունքները, միտումներն ու հեռանկարները,<br><br>Ծանոթ լինի<br>-ժամանակակից աշխարհի աշխարհաքաղաքական իրողությունների՝ հակամարտությունների և պատերազմների պատճառներին, ընթացքին, արդյունքներին և հետևանքներին: | Հիմնավորի<br>-ինչ նախադրյալներ կային հակաժողովրդավարական համակարգերի առաջացման համար:<br>Պատկերացնի<br>-դրանց դերը աշխարհաքաղաքական համակարգում Երկրորդ աշխարհամարտից հետո:<br>Եզրահանգումներ անի<br>-հետարդյունաբերական քաղաքակրթության արդի իրողությունների մասին: |
| Ներկայացնի<br>-մարդկության արդի համընդհանուր հիմնահարցերի (ժողովրդագրական, պարենային, ուրբանիզացիոն և այլն) էությունը: | Վերլուծի<br>-մարդկության համընդհանուր հիմնահարցերի էությունը և փորձի առաջարկել դրանց լուծման կամ հաղթահարման սեփական ուղիները: |

## ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Համաշխարհային պատմության» դասավանդման արդյունքում սովորողը պետք է.

- Գնահատի մարդկության պատմության ընթացքում ձեռք բերված քաղաքակրթական նվաճումները, իրեն համարի այդ ամենի օրինական ժառանգորդը, պահպանողն ու հաջորդ սերնդին փոխանցման պատասխանատու:
- Հարգալից վերաբերմունք ունենա այդ արժեքները ստեղծած ժողովուրդների, նրանց ներկայացուցիչների նկատմամբ:
- Ակնածանքի զգացում ունենա սեփական ժողովրդի, նրա բազմահազարամյա պատմության ընթացքում ունեցած թռիչքների ու մշակութային ձեռքբերումների նկատմամբ:
- Հարգալից վերաբերմունք ունենա աշխարհի այլ տարածաշրջաններում ու մայրցամաքներում ապրող տարբեր ժողովուրդների և ազգերի, նրանց ապրելակերպի, ավանդույթների ու մշակույթի նկատմամբ:
- Գիտակցի, որ առանց անցյալի մարդկանց ամենօրյա տքնաջան աշխատանքի և փորձության, սխալների ու տառապանքների գնով ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների, անհնարին կլիներ ժամանակակից քաղաքակրթությունն ընդհանրապես:
- Գիտակցի պետության և ազգային-հոգևոր կառույցների կարևորությունն ազգային մշակույթի պահպանման ու ազգային պետության զարգացման գործում,
- Կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը:
- Ըստ արժանվույն գնահատի անհատի և հասարակության դերը պատմության կերտման գործում:
- Գիտակցի խաղաղության, միջազգային համագործակցության կարևորությունը մարդկության առջև ծառացած համընդհանուր խնդիրները լուծելու տեսանկյունից:
- Գիտակցի տնտեսական հարաբերությունների անմիջական ազդեցությունը հասարակության գաղափարաքաղաքական ու մշակութային զարգացման ընթացքի վրա և կարևորի վերջինիս հետադարձ ազդեցությունը հասարակության տնտեսական կյանքի և հասարակական փոխհարաբերությունների վրա:

## ՈւՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Կրթության նպատակները, բովանդակությունը, մեթոդները, իրականացումը և գնահատումը փոխկապակցված են: Դրանց կարգավորման հիմքում ընկած է գնահատման ճիշտ ռազմավարության ընտրությունը, որը հետադարձ ազդեցությամբ կոչված է խթանելու կրթական ողջ համակարգի շարունակական զարգացումը: Որպես այդպիսին, գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Հանրակրթության պետական կրթակարգի դրույթներից բխում է, որ «Համաշխարհային պատմություն» դասընթացը ենթակա է, հիմնականում, ներքին գնահատման: Դրա բաղադրիչներն են անհատական և ֆրոնտալ հարցումը, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգումը, որոնք կիրառվում են դասի ընթացքում՝ դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ձևով: Այս կերպ գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարան) ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլև նրա (դասարանի) զարգացման ընթացքը:

Դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից իրականացվող արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

«Համաշխարհային պատմություն» դասընթացից սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային-անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝

- չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը.
- սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները.
- մտավոր գործունեության մակարդակը:

Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Ըստ նպատակադրման՝ կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝

ա. ընթացիկ գնահատում (ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը).

բ. ամփոփիչ գնահատում(ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը).

գ. հայտորոշիչ գնահատում(ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը).

դ. ձևավորող գնահատում(ճշգրտվում է դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, ուսումնական նյութը յուրացնելու նվազագույն շեմը, դասավանդման մեթոդները).

ե. հետազոտական գնահատում(հետազոտվում է ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսուցման արդյունքները):

Գնահատումն իրականացվում է գրավոր կամ բանավոր՝ հարցման, առաջադրանքի և գործնական աշխատանքի կատարման ստուգման, հարցարանի լրացման, ստուգարքի, քննության և այլ միջոցներով:

Գնահատման արդյունքն արտահայտվում է պաշտոնապես ընդունված միավորների սանդղակով՝ գնահատականներով:

Գնահատումն իրականացվում է «10» միավորային սանդղակով՝

| Միավոր | Անվանումը |
|---|---|
| 10 | «բացառիկ» |
| 9 | «գերազանց» |
| 8 | «շատ լավ» |
| 7 | «լավ» |
| 6 | «միջինից բարձր» |
| 5 | «միջին» |
| 4 | «բավարար» |
| 3 | «անբավարար» |
| 2 | «վատ» |
| 1 | «շատ վատ» |

Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները:

Բացի «10» միավորային համակարգից, ուսումնական գործընթացում կարելի է կիրառել նաև գնահատման այլ համակարգ՝ ապահովելով դրանց համարժեքությունը, կամ գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք:

Ստուգման արդյունքների հավաստիությունն ու վավերականությունը բարձրացնելու նպատակով նախընտրելի է ուսումնառության արդյունքների թեստավորումը, այսինքն՝ սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը հստակ ձևակերպված տարաբնույթ առաջադրանքների միջոցով, որոնք ունեն նույնքան հստակ ձևակերպված գնահատման արժեք՝ արտահայտված միավորների տեսքով:

## Գրականության ցանկ

1. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր: ՀՀ կառավարության 2008թ. որոշման Հավելված 1:
2. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004:
3. Գիլգամեշ, թարգմ.՝ Ն. Մարտիրոսյանի, Երևան, 1963:
4. Հերոդոտոս, Պատմություն, Երևան, 1986:
5. Հոմերոս, Իլիական, Երևան, 1955; 1987:
6. Հոմերոս, Ոդիսական, Երևան, 1957; 1988:
7. Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970:
8. Առաքելյան Ա., Հռոմեական գրականության պատմություն, Երևան, 1975:
9. Նույնի՝ Հունական գրականության պատմություն, Երևան, 1962:
10. Բորիսով Յու., Շառլ Մորիս Թալեյրան, Երևան, 1989:
11. Գոլովանով Յ., Էտյուդներ գիտնականների մասին, Երևան, 1984:
12. Գրիգորև Ս., Ալեքսանդր Սուվորով, Երևան, 1985:
13. Դիցաբանական բառարան, Երևան, 1985:
14. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
15. Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին(ուսումնական առաջադրանքներ և մեթոդական օժանդակ նյութեր), կազմեց Վ. Բայբուրդյանը, Երևան, 1984:
16. Լավրեցկի Ի., Սիմոն Բոլիվար, Երևան, 1975:
17. Լևանդովսկի Ա., Ժաննա դ'Արկ, Երևան, 1985:
18. Խաչատրյան Ի., ԱՄՆ-ի սահմանադրությունը, Երևան, 1991:
19. Հովսեփյան Մ., Միջազգային տնտեսական ինտեգրացիայի և գլոբալիզացիայի գործընթացները, Երևան, 2001:
20. Մանֆրեդ Ա., Երեք դիմանկար Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի, Երևան, 1988:
21. Նույնի՝ Նապոլեոն Բոնապարտ, Երևան, 1975:
22. Մոլչանով Ն., Գեներալ դը Գոլ, Երևան, 1976:
23. Նեյհարդ Ա., Շիշովա Ի., Հին աշխարհի յոթ հրաշալիքները, Երևան, 1989(կամ ցանկացած այլ հրատարակություն):
24. Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը(երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, 2001:
25. Շտեկլի Ա., Գալիլեյ, Երևան, 1984:
26. Ստինգլ Մ., Հնդկացիական բուրգերի առեղծվածները, Երևան, 1977:
27. Վոլկով Ֆ., Ուայթհոլի և Դաունինգ-սթրիթի գաղտնիքները, Երևան, 1983:
28. Տալանով Ա., Նանսեն, Երևան, 1962:

29. Տրուխանովսկի Վ. Գ., Ուինստոն Չերչիլ. քաղաքական կենսագրություն, Երևան, 1972:

30. Ցվայգ Ս., Մագելանի սխրագործությունը, Երևան, 1989:

31. Նույնի՝ Մարդկության աստեղային ժամերը: Պատմական մանրապատումներ, Երևան, 1974:

32. Ուտչենկո Ս., Հուլիոս Կեսար, Երևան, 1980:

33. Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, «Տաթև գիտակրթական համալիր», N 1-2; N 3-4, Երևան, 2006:

34. Àëåêñàíäð Âåëèêèé â ëåãåíäàõ è èññëåäîâàíèÿõ Âîñòîêà è Çàïàäà, Ìîñêâà, 2000.

35. Êý Þàíü. Ìèôû äðåâíåãî Êèòàÿ, Ìîñêâà, 1987.

36. Òåìêèí Ý. Í., Ýðìàí Â. Ã. Ìèôû Äðåâíåé Èíäèè, Ìîñêâà, 1982.

37. Õðåñòîìàòèÿ ïî èñòîðèè Äðåâíåãî ìèðà(ïîä ðåä. Â. Áîðóõîâè÷à), Ñàðàòîâ, 1973.

38. Õðåñòîìàòèÿ ïî èñòîðèè ñðåäíèõ âåêîâ, ò.1, Ìîñêâà, 1949.

39. Àìèðõàíÿí À. Íàïîëåîí, êàêèì åãî çíàë òåëîõðàíèòåëü îðóæåíîñåö Ðóñòàì, Ìîñêâà, 2007.

40. Âåëåñüêî Â. È., Ñòàëèí., Ðóçâåëüò., ×åð÷èëëü… Ïîëèòè÷åñêèå ïîðòðåòû. Ìèíñê, 1991.

41. Âåëèêèå ïîëêîâîäöû è èõ áèòâû. À. Â. Âåíêîâ, Ñ. Â. Äåðêà÷, Ðîñòîâ-íà-Äîíó,1999

42. Âñåìèðíàÿ èñòîðèÿ íîâåéøåãî âðåìåíè. Ñïðàâî÷íîå ïîñîáèå, Ìèíñê, 1998.

43. Ãåðíè Î. Ð., Õåòòû, Ìîñêâà, 1987.

44. Æèëëåðè Ôðàíñèñ, Ëåäè Äîëæíà óìåðåòü, Íîâãîðîä, 2007.

45. Èëëþñòðèðîâàííàÿ èñòîðèÿ ìèðà, òò. I-III, Ìîñêâà, 1998.

46. Èñòîðèÿ: Áîëüøîé ñïðàâî÷íèê äëÿ øêîëüíèêîâ è ïîñòóïàþùèõ â âóçû, Àìáàðîâ Â. Í., Àíäðååâ Ï., ÀíòîíåíêîÑ. Ò. è äð., Ìîñêâà, 2000.

47. Èñòîðèÿ äèïëîìàòèè, âòîðîå èçäàíèå, òò. 1-5, Ìîñêâà, 1975-1979.

48. Èñòîðèÿ äèïëîìàòèè(ñîñò. À. Ëàêòèîíîâ), Ìîñêâà, 2005.

49. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà è ñðåäíèõ âåêîâ. 5-6êë.: Äèäàêòè÷åñêèå ìàòåðèàëû, Ñóõîâ Â. Â. è äð.- Ìîñêâà, 2000.

50. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà, ó÷åá. äëÿ VI êë. ñð. ó÷åá. çàâåäåíèé, Âèãàñèí À. À., Ñàìîçâàíöåâà Í. Â., Ìîñêâà, 1995.

51. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà, â òðåõ òîìàõ, ïîä ðåäàêöèåé Äüÿêîíîâà È. Ì., Ìîñêâà, 1989.

52. Èñòîðèÿ Äðåâíåãî Ðèìà. Ïîä ðåäàêöèåé À. Ã. ÁîUùàíèíà, Ìîñêâà, 1956.

53. Èñòîðèÿ Äðåâíåé Ãðåöèè. Ïîä ðåäàêöèåé Â. È. Àâäèåâà, Ìîñêâà, 1972.

54. Èñòîðèÿ ìåæäóíàðîäíûõ îòíîøåíèé è âíåøíåé ïîëèòèêè ÑÑÑÐ, òò. 1-3, Ìîñêâà, 1967.

55. Èñòîðèÿ ìèðîâûõ öèâèëèçàöèé ñ äðåâíåéøèõ âðåìåí äî êîíöà XX âåêà . 10-11 êë.: Ïîñîáèå äëÿ îáùåîáðàçîâ. ó÷åá. çàâåäåíèé, Õà÷àòóðÿí Ì. Â., ïîä ðåä. Â. È. Óêîëîâîé-Ìîñêâà, 2000.

56. Èñòîðèÿ ðåëèãèé. Ó÷åáíîå ïîñîáèå, Ìîñêâà, 2000.

57. Èñòîðèÿ ñðåäíèõ âåêîâ, ó÷åáíèê äëÿ VII êë. ñðåäíèõ ó÷åá. çàâåäåíèé, Áîéöîâ Ì., Øóêóðîâ Ð., Ìîñêâà, 1995.

58. Èñòðèí Â. À., Ðàçâèòèå ïèñüìà, Ì., 1961.

59. Ìàëàÿ èñòîðèÿ èñêóññòâà:

à) “Ïåðâîáûòíîå èñêóññòâî”, Ìîñêâà, 1982.

á) “Èñêóññòâî Äðåâíåãî Âîñòîêà”, Ìîñêâà, 1976.

â) “Àíòè÷íîå èñêóññòâî”, Ìîñêâà, 1972.

60. Ìèð â XX âåêå. Äîïîëíèòåëüíûå ìàòåðèàëû ê ó÷åáíèêàì ïî íîâåéøåé èñòîðèè, Ìîñêâà, 1999.

61. Ìîíòý Ï., Åãèïåò Ðàìñåñîâ, Ìîñêâà, 1989.

62. Ìóññêèé È. À. 100 âåëèêèõ äèïëîìàòîâ, Ìîñêâà, 2004.

63. Íîâàÿ èñòîðèÿ, 1500-1800: Ó÷åáíèê äëÿ 7-ûõ êë. îáùåîáðàçîâàò. ó÷ðåæäåíèé. Þäîâñêàÿ À. ß., Áàðàíîâ Ï. À., Âàíþøêèíà Ë. Ì., Ìîñêâà, 2000.

64. Íîâàÿ èñòîðèÿ, 1800-1918. Ó÷åáíèê äëÿ 8-ûõ êë. îáùåîáðàçîâàò. ó÷ðåæäåíèé. Þäîâñêàÿ À. ß., Áàðàíîâ Ï. À., Âàíþøêèíà Ë. Ì., Ìîñêâà, 2000.

65. Íîâèêîâ Ñ. Â., Ìàíûêèí À. Ñ. è äð. Âñåîáùàÿ èñòîðèÿ, Ìîñêâà, 2004.

66. Îëáðàéò Ì. Ðåëèãèÿ è ìèðîâàÿ ïîëèòèêà, Ìîñêâà, 2007.

67. Îïïåíõåéì À. Äðåâíÿÿ Ìåñîïîòàìèÿ, Ìîñêâà, 1990.

68. Ïàíàðèí À. Ñ. Ãëîáàëüíîå ïîëèòè÷åñêîå ïðîãíîçèðîâàíèå, Ìîñêâà, 2000.

69. Ïîëüêåð Ê., Ñöåïîíèí Õ. Êòî íå ìîë÷èò, òîò äîëæåí óìåðåòü, Ìîñêâà, 1984.

70. Ñàôðàñòÿí Ð. À. Äîêòðèíà îñìàíèçìà â ïîëèòè÷åñêîé æèçíè, Îñìàíñêîé èìïåðèè, Åðåâàí, 1985.

71. Òîéíáè À. Öèâèëèçàöèÿ ïåðåä ñóäîì èñòîðèè, Ñàíêò-Ïåòåðáóðã, 1995.

72. Õðîíèêà ÷åëîâå÷åñòâà: Áîëüøàÿ ýíöèêëîïåäèÿ, ñîñòàâèòåëü Á. Õàðåíáåðã, Ìîñêâà,1996.

73. ×óáèíñêèé Â.Â. Áèñìàðê: ïîëèòè÷åñêàÿ áèîãðàôèÿ, Ìîñêâà, 1988.

74. ßêîâëåâà Í. Í. Ôðàíêëèí Äåëàíî Ðóçâåëüò: ÷åëîâåê è ïîëèòèê, Ìîñêâà, 2003.

75. A concise history of the world, G. M. Roberts, New-York, Oxford University press. 1995.

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

# ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

(X - XII դասարաններ)

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի չափորոշչի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, ՀՀ կառավարության 2008թ. հաստատած Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը:

«Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի սույն չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը,
- առարկայի ընդհանուր նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնառության տարատեսակները և միջոցները,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երկու՝ Ա և Բ մակարդակներով, որոնք համապատասխանում են՝ Ա- միջին, Բ- բարձր պատրաստվածությանը,
- ուսումնառության արդյունքների գնահատումը,
- երաշխավորվող գրականության ցանկը:

## ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Պատմությունը միշտ էլ եղել և մնում է հանրակրթական դպրոցի հիմնարար դասընթացներից, որի խնդիրը բնավ էլ չի սահմանափակվում բնագավառի վերաբերյալ գիտելիքներ ուսուցանելով, կարողություններ և հմտություններ ձևավորելով ու զարգացնելով: Նեղ իմաստով դպրոցում ստացած պատմագիտական գիտելիքը, պատմությունն ուսումնասիրելու հմտություններն ու կարողություններն ավագ դպրոցի աշակերտի համար հիմք են հանդիսանում բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու դեպքում մասնագիտանալ հասարակագիտական այնպիսի բնագավառներում, ինչպիսին են պատմությունը, արևելագիտությունը, միջազգային հարաբերությունները, իրավագիտությունը, քաղաքագիտությունը, մասամբ՝ բանասիրությունը, աստվածաբանությունը, մշակույթի տարբեր ճյուղերը: Լայն իմաստով պատմության իմացությունը նպաստում է մարդու և ապագա քաղաքացու աշխարհայացքի, նրա քաղաքացիական դիրքորոշման կերտմանը: Պատահական չէ, որ մարդկության անցյալի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումն ուսումնասիրող գիտության՝ պատմության ուսուցումը հանրակրթական դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: Պատմության հիմնարար գիտելիքների տարածման և ամրապնդման հասարակական-քաղաքական նշանակությունը միշտ գիտակցել են անցյալի բոլոր հասարակարգերում՝ այն արտացոլելով պետական տարբեր մոտեցումներում ու քաղաքականության ուղղություններում: Պատմական անցյալի իմաստավորման և մոտեցումների հստակեցման ուղղությամբ գիտամեթոդական աշխատանքը վերջին տասնամյակներում դարձել է ավելի ու ավելի նպատակասլաց և համակարգված: Հետևաբար, «Համաշխարհային պատմություն» դասընթացի բովանդակության մշակման համար հայեցակարգային նշանակություն կարող են ունենալ հետևյալ սկզբունքները.

7. Արդի աշխարհում պատմության բովանդակության հիմնախնդիրը, հանրակրթական դպրոցում դրա դասավանդման հիմնական գաղափարական հայեցակարգի համար պայքարն ընդունել է միջազգային բնույթ, առանձին դեպքերում դարձել միջպետական հարաբերությունների քննարկման առարկա: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի հայեցակարգի մշակումը պետք է բխի մեր երկրի և պետության աշխարհաքաղաքական իրավիճակից, ինչպես նաև նրա արտաքին քաղաքականության ռազմավարական կողմնորոշումներից:
8. Պատմությունը հասարակական-քաղաքական գիտություն է, որն առավել, քան հումանիտար որևէ այլ գիտություն, փոխադարձ ամուր կապի մեջ է հասարակության քաղաքական մտածողության հետ, մշտապես ենթակա է նրա զգայուն արձագանքներին: Բացի այդ, պատմագիտությունը գտնվում է անընդմեջ զարգացման գործընթացում: Ուստի, առարկայի հայեցակարգը

պետք է ունենա կայուն գիտական հիմք:

9. Հայեցակարգի մշակման հիմքում պետք է ընկած լինի տվյալ առարկայի բովանդակության և դասավանդման ուղղությամբ կուտակված գիտամեթոդական դրական փորձը:

10. Համաշխարհային պատմության հանրակրթական հսկայական նշանակության գիտակցումը ևս անհրաժեշտ պայման է ընդհանուր հայեցակարգի մշակման գործում: Պետք է նկատի ունենալ, որ պատմությունը մի գիտություն է, որը միշտ էլ ունեցել է հասարակական բազմաշերտ սպառում: Ընդսմին, հասարակական այդ սպառումը, որը սկսվում է հանրակրթական դպրոցից, ունի անընդմեջ բնույթ:
11. «Համաշխարհային պատմությունն» ավագ դպրոցում միջանկյալ օղակ է պարտադիր հիմնական դպրոցում և բուհում տվյալ առարկան դասավանդելու ձևերի, մեթոդների և բովանդակության միջև: Այն հանդիսանում է հիմնական դպրոցի շարունակությունը, բայց և մասնագիտական կրթության նախաշեմը: Հետևաբար, նրա խնդիրն է՝ խորացնել հիմնական դպրոցում աշակերտի ստացած գիտելիքները, զարգացնել նրա կարողություններն ու հմտությունները՝ ուղղորդելով դրանք դեպի սովորողի մասնագիտական կողմնորոշվածությանը, հավակնություններին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող բուհական կրթության բնագավառը:
12. Պատմությունն աշխարհայացք ձևավորող գիտություն է, հանգամանք, որը ևս պետք է հաշվի առնել առարկայի գիտական հայեցակարգի մշակման գործում:

«Համաշխարհային պատմություն» առարկայի դպրոցական դասընթացի բովանդակային գիտական առանցքը, որպես ընդհանուր հայեցակարգի բաղկացուցիչ մաս, պետք է հանգի հետևյալ գլխավոր դրույթներին.

ա. Ցանկացած գիտության նպատակը ճշմարտության վերհանումն է, որն էլ օգնում է մարդուն, ազգին և պետությանը բարգավաճելու: Սովորողներին հաղորդել միայն պատմական ճշմարտությունը, իրականը: Ճշմարտության օրենքներով ապրող սովորողը կունենա առողջ դատողություն:

բ. Պատմական ժամանակաշրջանների գլխավոր դեպքերը, գործընթացները և երևույթները բացատրել և հիմնավորել նախ և առաջ քաղաքակրթական արժևորումներով:

գ. Համաշխարհային քաղաքակրթական գործընթացներում վճռական գործոն համարել ազգային քաղաքակրթական նվաճումները: Ընդսմին՝ հայկականը դիտարկել որպես միջքաղաքակրթական (թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային առումներով) մի ուրույն աշխարհ, որը որոշակի ներդրում ունի համաշխարհային պատմության կերտման գործում:

դ. Հրաժարվել հասարակական-տնտեսական կացութաձևերի մասին մարքսիստական ուսմունքից, որի օգնությամբ միշտ չէ, որ հնարավոր է բացահայտել պատմական ճշմարտությունը:

ե. Ներազգային ընկերային պայքարը պատմական գործընթացներում համարել ոչ թե վճռորոշ, այլ ածանցյալ գործոն, որը միշտ նպատակաուղղված է հասարակության նորացմանը: Համաշխարհային պատմության գործընթացներում ամենավճռական ընկերային գործոն համարել ազգը, նրա հասարակական կառույցները և անընդմեջ պայքարը հանուն գոյատևման ու բարգավաճման:

զ. Համաշխարհային պատմության դասընթացում գլխավոր ուշադրությունը դարձնել պատմական զարգացման տվյալ փուլում առաջին գծում գտնվող ազգերին և հասարակություններին: Միևնույն ժամանակ անդրադառնալ Հայաստանին հարևան ժողովուրդների և պետությունների պատմությանը:

է. Հայոց և համաշխարհային պատմության գործընթացները վերլուծել և ներկայացնել մեկ պատմական ամբողջության մեջ, միասնական հայեցակարգի շրջանակում, ինչը չի հակասում դրանք տարբեր դասընթացներով դասավանդելու իրողությանը:

Համաշխարհային պատմության դպրոցական դասընթացի դասավանդման տեղն ու դերը հանրակրթության համակարգում, ինչպես նաև ուսումնական նյութի ծավալի որոշումը և դասավանդման մեթոդիկան նույնպես կարիք ունեն հայեցակարգային հստակեցման: Այդ առումով կարևոր է հետևյալ մոտեցումների պահպանումը.

5. Համաշխարհային պատմության դասընթացը համարել հանրակրթության անկապտելի մասը, առանց որի անհնարին է լիարժեք միջնակարգ (մասնավորապես՝ պատմագիտական) կրթությունը:
6. Հնարավորինս հստակեցնել հանրակրթական մյուս առարկաների հետ «Համաշխարհային պատմության» միջառարկայական կապերը: Դրանցում էական են առնչությունները բնագիտամաթեմատիկական առարկաների, աշխարհագրության(պատմական և արդի քաղաքական աշխարհագրություն), լեզուների (օտարալեզու պատմական սկզբնաղբյուրների և աշխատությունների օգտագործում, բառապաշարի հարստացում, գիտական տերմինների բացատրություն), իրավագիտության (պետության և իրավունքի պատմություն), հասարակագիտական այլ դասընթացների հետ:
7. Շատ կարևոր է պատմագիտական կրթության հաջորդականության ապահովումը միջին և ավագ դպրոցներում, որը հնարավորություն կտա պահպանել գիտականությունը, ինչպես նաև նպաստել սովորողների պատմական մտածողության ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը:
8. Պատմության յուրաքանչյուր դաս պետք է լուծի որոշակի ուսումնադաստիարակչական խնդիր, որի հստակեցումը դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հիմնախնդիրն է:

Հանրակրթական դպրոցում պատմագիտական կրթության էությունը կազմում են այն հիմնական բովանդակային ուղղությունները, որոնք, պատմության ճանաչողության մեթոդաբանության համաձայն, որոշում են գիտելիքների համակազմը, դրանց

ներկայացման և յուրացման մակարդակը, ինչն անհրաժեշտ է ուսումնական գործընթացի ամբողջականության ապահովման համար: Այդպիսի բովանդակային ուղղություններ կարելի է համարել պատմական ժամանակը, պատմական տարածությունը, պատմական զարգացումը, որը տեղի է ունենում դեպքերի պատճառահետևանքային կապերի հիման վրա:

- Պատմական ժամանակ.

Տարիների հաշվումը պատմության մեջ և պատմական դեպքերի ու գործընթացների պարբերացումը, պատմական իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունն ու տևողությունը, պատմական իրադարձությունների համընթացությունը`

- Պատմական տարածություն.

Պատմական զարգացման աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկ) գործոնները, պատմական որոշ գործընթացների տեղայնությունն ու համընդհանրությունը (գլոբալությունը)

- Պատմական զարգացում (առաջադիմություն և հետընթաց), ինչը ներկայացվում է հետևյալ կողմերով.
  - մարդաբանական, այսինքն` մարդու և մարդկային հասարակության ծագումը և զարգացումը.
  - հոգեբանական, այսինքն` անհատի ձևավորումը և նրա դերը տարբեր պատմական դարաշրջաններում, մարդկանց գործողությունների դրդապատճառները պատմության մեջ.
  - ֆորմացիոն, այսինքն` մարդկանց աշխատանքային գործունեության էվոլյուցիան, նյութական արտադրության զարգացումը և արտադրական հարաբերությունների փոփոխությունը.
  - մշակութաբանական, այսինքն` առաջին հերթին հոգևոր, ինչպես նաև նյութական մշակույթի զարգացումը, ժողովուրդների մշակույթի, աշխարհի քաղաքակրթությունների հաջորդայնությունն ու փոխազդեցությունը.
  - էթնոազգային, այսինքն` էթնիկ ընդհանրությունների ձևավորումն ու դրանց զարգացման գործընթացը տարբեր պատմական դարաշրջաններում.
  - պետական-քաղաքական, այսինքն` պետականության սկզբնավորումն ու զարգացումը, տարբեր երկրների քաղաքական պատմության հիմնական միտումները.
  - աշխարհաքաղաքական, այսինքն` տարբեր երկրների, ժողովուրդների, քաղաքակրթությունների փոխհարաբերությունների պատմությունը,պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը.
  - սոցիալական, այսինքն` հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորումն ու զարգացումը, սոցիալական շարժումները պատմության մեջ.
  - փիլիսոփայական, այսինքն մարդու կողմից շրջակա աշխարհի ճանաչողության պատմությունը, կրոնական և հասարակական ուսմունքները.
  - արժեքաբանական, այսինքն` ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը հասարակության մեջ:

# ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր հոսքի X-XII դասարաններում «Համաշխարհային պատմության» դասավանդման նպատակներն են.

- սովորողների կողմից համաշխարհային պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ առավել կարևոր գիտելիքների տիրապետումը.
- ըստ առանձին տարածաշրջանների ու երկրների, մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել մշակույթի զարգացման և քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ.
- սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորում աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա: Ելնելով վերը նշված նպատակներից՝ դպրոցում պատմագիտական կրթության համար առաջնային են համարվում հետևյալ խնդիրները.

ա - սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության մեջ եղած կարևորագույն իրադարձությունների, երևույթների. գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ, ըստ հասարակության կենսագործունեության բոլոր հիմնական ուղղությունների.

բ- սովորողների մեջ զարգացնել ընդհանուր ուսումնական և պատմության ուսումնասիրությանն ուղղված առանձին կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն պատմությունից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար.

գ- նպաստել սովորողի, իբրև անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, որը գիտակցում է հիմնարար հոգևոր արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության բարձրացմանը.

դ- սովորեցնել պատճառահետևանքային կապեր գտնել պատմական գործընթացներում, հասկանալ ու բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման տեմպը, բնույթն ու առանձնահատկությունները պայմանավորող գործոնները:

## ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: «Համաշխարհային պատմություն» առարկայի բովանդակությունը ավագ դպրոցում, դասավանդման նպատակները և խնդիրները: Պատմության պարբերացումը: Համաշխարհային պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը: Քաղաքակրթություն հասկացությունը: Քաղաքակրթության ակունքներում. «նեոլիթյան հեղափոխություն»:

### ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին պետությունները Միջագետքում և Եգիպտոսում: Արևելամիջերկրածովյան քաղաք-պետությունները: Հնդկաստան: Չինաստանի վաղ պետությունները:

Քաղաքակրթությունների վերելքը Արևելքում (Եգիպտոսի Հին, Միջին և Նոր թագավորությունները, Աքքադ, Խեթական տերությունը, Միտաննի, Միջին ասորեստանյան թագավորություն): Միջազգային հարաբերությունները Ք.ա. III-II հազարամյակներում: «Համաշխարհային» պետություններ (Նոր ասորեստանյան տերությունը, Աքեմենյան տերությունը):

### ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքակրթությունների կազմավորումը Արևմուտքում: Հունական աշխարհը Ք.ա. III-II հազարամյակներում. Կրետե-միկենյան քաղաքակրթությունը: «Հոմերոսյան» դարաշրջանը: Առաջին պետությունները (վաղ հունական պոլիս, գաղութային պոլիսները, Իտալիայի էտրուսկյան քաղաքները): Հունական պոլիսի էությունը և առանձնահատկությունները: Աթենքը Ք. ա. VIII – VI դարերում: Սպարտա:

Քաղաքակրթությունների վերելքը Արևմուտքում: Հույն-պարսկական պատերազմները: Աթենական պետությունը Ք.ա. V դարում: Պելոպոնեսյան պատերազմները: Պոլիսի ճգնաժամը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և հելլենիստական պետությունների ձևավորումը:

Իտալիան Ք.ա.II հազարամյակում և Ք. ա. I հազարամյակի սկզբին: Հռոմեական հանրապետությունը Ք.ա. V-I դարերում, Հռոմի նվաճումներն Արևելքում: Հռոմը Կենտրոնական Եվրոպայում: Հանրապետության կարգի ճգնաժամը: Օգոստոսի պրինցիպատը: Հռոմեական կայսրությունը Ք. ա. I դարից մինչև Ք. ծ. հ. III դարը:

### ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հին հասարակությունները: Ազատ մարդ: Ստրուկ: Քաղաքակիրթ աշխարհը և բարբարոսական ծայրագավառը:

Հոգևոր մշակույթը: Գիրը: Գրականությունը: Գիտությունը: Արվեստը: Կրոնը. բազմաստվածության ավարտը, համաշխարհային կրոններ:

## ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

Քաղաքակրթությունների խաչմերուկում: Հունականացումը: Հելլենիզմ: Հռոմը և Արևելքի երկրները: Հռոմը և Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները: Եվրոպայի հռոմեականացումը:

Հին աշխարհի ավարտը: Հռոմեական կայսրության թուլացումը: Արևմտյան և Արևելյան հռոմեական կայսրությունները: Արևելքի երկրները հելլենիստական դարաշրջանի ավարտին: «Բարբարոսական Եվրոպայի» ժողովուրդները Ք.ա. I – Ք. ծ. հ. IV դարերում: Հնդկաստանը և Չինաստանը նոր հազարամյակի սկզբներին:

# ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Համաշխարհային պատմության միջնադարյան շրջանի քաղաքակրթությունները:

## ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները: Հռոմեական և «բարբարոսական» քաղաքակրթությունների համադրումը: Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակները: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Հասարակության սոցիալական կառուցվածքը: Ավատատիրական աստիճանակարգությունը:

Պետությունը վաղ միջնադարում: Իրավունքը: «Սալիական դատաստանագիրքը»: Պայքար Արևմտյան հռոմեական կայսրության ժառանգության համար: Կառլոս Մեծի կայսրությունը: Սրբազան հռոմեական կայսրություն:

Քրիստոնեական եկեղեցին վաղ միջնադարում: Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում: Պապականության առաջացումը: Եկեղեցին Եվրոպայի սոցիալ-քաղաքական կյանքում: Հերետիկոսական շարժումները:

Վաղ միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Պատմագրություն: Գրականություն: Արվեստ:

Բյուզանդական քաղաքակրթության ձևավորումը: Կայսերական իշխանությունը: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: Արաբա-բյուզանդական հակամարտությունը: Պատկերամարտություն:

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Դասական միջնադարը Արևմտյան Եվրոպայում: Խաչակրության դարաշրջանը: Խաչակրության արդյունքները և հետևանքները:

Սոցիալական միջավայրի վերակառուցումը: Գյուղատնտեսությունը: Միջնադարյան քաղաքների առաջացումը: Արհեստը և առևտուրը: Մանուֆակտուրա:

Դասային միապետության առաջացումը: Ավատատիրական հասարակության դասերի ձևավորման ավարտը: Անգլիական խորհրդարանը: Գլխավոր շտատները Ֆրանսիայում: Ազգային պետությունների ձևավորումը:

XIVդ. ճգնաժամը: Պապականության անկումը: Գյուղացիական ապստամբությունները: Միջազգային հարաբերությունները Եվրոպայում: Հարյուրամյա պատերազմը:

Դասական միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Համալսարաններ: Հումանիստական գաղափարախոսության ձևավորումը: Պատմագիտության տեղը նոր աշխարհընկալման մեջ: Վաղ Վերածնունդը Իտալիայում: Նոր աշխարհայացքի ձևավորումը:

Բյուզանդիան IX-XVդդ.: Մակեդոնական Վերածնունդը: Խաչակրաց արշավանքները և Բյուզանդիան: Գաղափարաքաղաքական պայքարը Բյուզանդիայում: Բյուզանդական կայսրության անկումը: Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները: Վաղ Բյուզանդական մշակույթը: Դասական շրջանի մշակույթը:

Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում: Վաղ սլավոնական ցեղերը: Սոցիալական միջավայրը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Պետության կազմավորումը և զարգացումը: Սլավոնները և Բյուզանդիան: Ռուսիայի քրիստոնեացումը: «Ռուսիայից Ռուսաստան»: Ռուսական մշակույթը:

## ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունները: Հինդու քաղաքակրթությունը. հասարակության սոցիալական աստիճանակարգությունը: Պետությունը: Մշակույթը: Բուդդայականությունը արևելյան քաղաքակրթություններում: Չինաստանը միջնադարում. սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները: Հասարակության քաղաքական կազմակերպումը: Կայսերական իշխանությունը: Մշակույթը: Ճապոնիան միջնադարում. սոցիալական միջավայրի կազմակերպումը: Կառավարման համակարգը: Մշակույթը:

Իսլամական քաղաքակրթությունը: Իսլամական քաղաքակրթության ձևավորումը: Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Խալիֆի իշխանությունը: Մշակույթը:

Իրանական քաղաքակրթությունը միջնադարում: Իրանը Սասանյանների օրոք: Իսլամի հաստատումը Իրանում: Միասնական պետության վերականգնումը:

Քոչվորական քաղաքակրթություններ: Քոչվորական քաղաքակրթության առանձնահատկությունները: Սելջուկ-թուրքեր: Մոնղոլական կայսրությունը: Օսմանյան տերությունը:

Մինչկոլումբոսյան Ամերիկա: Ացտեկների, մայաների և ինկերի պետությունները: Սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները և տիպերը:

Սոցիալական աստիճանակարգությունը: Պետությունը: Մինչկոլումբոսյան Ամերիկայի մշակույթը:

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

Աշխարհագրական մեծ հայտագործությունները և դրանց հետևանքները: Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը: Կապիտալի նախասկզբնական կուտակումը: Գյուղատնտեսության զարգացումը: Մանուֆակտուրա: Առևտուր: Բացարձակ միապետության առաջացումը:

Ռեֆորմացիոն շարժումը, զարգացումը: «Թագավորական ռեֆորմացիան» Անգլիայում: Հուգենոտյան պատերազմները Ֆրանսիայում:

Նիդերլանդական հեղափոխությունը: Երեսնամյա պատերազմը, Նոր Եվրոպայի ծնունդը:

Արևմտյան Եվրոպայի մշակույթը XVI դարում: Նոր գիտության ծնունդը: Քաղաքական մտքի զարգացումը: Վերածննդի մշակույթը:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII ԴԱՐ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Աշխարհը Նոր ժամանակների սկզբին: Արդյունաբերական արտադրության աճը: Փոփոխություններ հասարակության սոցիալական համակարգում: Առևտրի զարգացումը: Մարդկանց ապրելակերպը: Քաղաքային և գյուղական կյանքը: Նորաձևությունը:

Միահեծանությունը Եվրոպայում XVI-XVII դարերում: Միահեծանության առանձնահատկությունները Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում: Միահեծանությունը Ռուսաստանում:

Եվրոպական քաղաքակրթության զարգացումը: Արդյունաբերական հեղաշրջումը: Մանուֆակտուրային արտադրության զարգացումը XVII – XVIII դարերում: Ներքին և արտաքին առևտրի զարգացումը:

Անցումը մանուֆակտուրայից մեքենայական արտադրության: Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում: Արդյունաբերական հեղաշրջումը եվրոպական մյուս երկրներում: Արդյունաբերական հեղաշրջման ընկերային (սոցիալական) հետևանքները: Բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Սոցիալական օրենսդրության ամրապնդումը:

Խոշոր արտադրության աճը Եվրոպայում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Գիտատեխնիկական առաջընթացը: Մոնոպոլիստական կապիտալիզմը: Եվրոպայի տնտեսական վերելքը: Միջազգային շուկայի ձևավորումը: Համաշխարհային առևտուրը XX դարի սկզբին:

Քաղաքական կյանքի զարգացումը Եվրոպայում: Ժողովրդավարական պետության ձևավորման գործընթացը: Լուսավորական գաղափարների տարածումը: Սահմանադրական կարգի հաստատման միտումները և արդյունքները:

Սահմանադրական կարգի հաստատման անգլիական ուղին: 1640-1660թթ. հեղափոխությունը: «Փառահեղ հեղափոխությունը»: Սահմանադրական օրենքները: Պայքար ընտրական իրավունքի համար XIX դարում: Չարտիստական շարժումը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը:

Սահմանադրական կարգի հաստատման ֆրանսիական ուղին: Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը՝ սահմանադրական կարգերի հաստատման սկիզբ: Երկրորդ հանրապետությունը: Երկրորդ կայսրության սահմանադրական կարգը: Սահմանադրական կարգի ամրապնդումը Երրորդ հանրապետության շրջանում: Պայքար հանրապետության ժողովրդավարացման համար:

Սահմանադրական կարգի հաստատման գերմանական ուղին: Միասնական պետության ստեղծումը: Գերմանական կայսրության պետական կարգը: Քաղաքական կյանքի զարգացումը:

Ավստրո-Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն: Երկմիասնական պետության սահմանադրությունը: Ազգային հիմնախնդիրը Ավստրո-Հունգարիայում:

Սահմանադրական կարգի հաստատումը Իտալիայում: Միասնական պետության ստեղծումը: Իտալական թագավորության սահմանադրական կարգը: Վատիկանը՝ Իտալիայի հասարակական-քաղաքական կյանքում:

Սահմանադրական պետությունների առաջացումը Բալկանյան թերակղզում: Նորանկախ պետությունների սահմանադրությունները: Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի զարգացումը:

Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին: Հասարակության նորացման՝ Պետրոս Մեծի ծրագիրը: Զարգացման ուղու ընտրությունը. Եվրոպա, թե Ասիա: Հասարակական հոսանքներ՝ սլավոնասերներ, արևմտականներ, հեղափոխականներ: Ազատական բարեփոխումները 1860-70-ական թվականներին: Ռուս նարոդնիկությունը: Սոցիալ-դեմոկրատական շարժումը: Սահմանադրական կարգի ստեղծման փորձը XX դարի սկզբին: Քաղաքակրթական փոխազդեցությունները Ռուսաստանի ազգային շրջաններում: Ազգային հարցը Ռուսական կայսրությունում:

Նոր ժամանակների քաղաքական-գաղափարական հիմնական ուղղությունները: Լիբերալիզմ: Ազգայնականություն: Պահպանողականություն: Սոցիալիզմ: Մարքսիզմի սոցիալ-տնտեսական և գաղափարական բովանդակությունը: Սոցիալ-դեմոկրատական շարժումը, կուսակցությունների առաջացումը:

Արդյունաբերական հասարակության ձևավորման ամերիկյան ուղին: Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութները XVII-XVIII դարերում: Ամերիկյան լուսավորականությունը: Անկախության պատերազմը: ԱՄՆ-ի սահմանադրությունը: ԱՄՆ-ի քաղաքական զարգացումը. XIX դարի կեսեր - XX դարի սկիզբ: Քաղաքացիական պատերազմը և ստրկության վերացումը: Ռասայական խտրականության պահպանումը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը: Ամերիկյան ժողովրդավարությունը (հասարակական կազմակերպություններ, մամուլ): Ներքին միասնական շուկայի կազմավորումը: Տնտեսության զարգացման արդյունքները XX դարի սկզբին:

Անկախ պետությունների առաջացումը Լատինական Ամերիկայում: Նորանկախ երկրների պետական կարգը: Լատինաամերիկյան ազգերի կազմավորումը:

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արևելքի երկրները: Օսմանյան տերության զարգացման առանձնահատկություն-ները: Թանզիմաթյան բարեփոխումների առաջին փուլը: «Նոր օսմանների» շարժումը և սահմանադրության ընդունումը: Թանզիմաթի երկրորդ փուլը: Երիտթուրքական շարժումը: 1908-1909թթ. հեղաշրջումը: Երիտթուրքերի կառավարումը 1908-1914թթ.:

Արաբական երկրները (XIX դար - XX դարի սկիզբ): Մուհամեդ Ալիի բարեփոխումները Եգիպտոսում: Արաբական ազգայնականության առաջացումը:

Իրանի հասարակական-քաղաքական կացությունը (XVIII դար – XX դարի սկիզբ): Եվրոպական տերությունները և Իրանը: Անգլո-ռուսական մրցակցությունը Իրանում XIX դարի առաջին կեսին: 1905-1911թթ. հեղափոխությունը Իրանում: Պայքար սահմանադրական կարգերի ստեղծման համար:

Չինաստանը XIX դարի երկրորդ կեսին-XX դարի սկզբին: 1911-1912 թթ. հեղափոխությունը Չինաստանում: Արդյունաբերական քաղաքակրթության առաջացումը Ճապոնիայում: Սահմանադրական կարգերի ստեղծումը: Ճապոնիան XX դարի սկիզբին:

Համաշխարհային գաղութային համակարգը: Գաղութային նվաճումները Ասիայում և Աֆրիկայում: Անգլո-ֆրանսիական մրցակցությունը: Համաշխարհային գաղութային համակարգի կազմավորման ավարտը (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ):

## ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային հարաբերությունները (XVII դարի երկրորդ կես - XVIII դարի 80-ական թվականներ): Համաեվրոպական պատերազմները XVIII դարում:

Միջազգային հարաբերությունները ֆրանսիական Մեծ հեղափոխության դարաշրջանում: Միջազգային հարաբերությունները 1814-1860-ական թվականներին:

Վիեննայի համակարգի ստեղծումը: «Սրբազան դաշինքի» գործունեությունը: Վիեննայի համակարգի ճգնաժամը:

Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջին - XX դարի սկզբին: Միջազգային հասարակական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը: Երկու հակադիր խմբավորումների ձևավորումը. Եռյակ դաշինք, Անտանտ: ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական նպատակները:

Պատերազմները միջազգային հարաբերությունների համակարգում: Պատերազմների գաղափարական հիմնավորումները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Եվրոպան: Ռուս-ճապոնական պատերազմը: 1912-1913թթ. բալկանյան պատերազմները:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները և սկիզբը: Պատերազմի գլխավոր ռազմաբեմերը: Ռազմական գործողությունների ընթացքը: Աշխարհամարտի կովկասյան ճակատը: Օսմանյան կայսրության պանթուրքական ծրագրերը գործողության մեջ. Հայոց Մեծ եղեռնը:

Քաղաքական ճգնաժամը Ռուսաստանում: Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները: Խորհրդային Ռուսաստանը՝ սոցիալիզմի առաջին երկիր: Ռուսաստանի դուրս գալը պատերազմից: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլը, պատերազմի հետևանքները:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Վերածննդի մշակույթի հետևանքները: Գիտական աշխարհընկալման զարգացումը XVII - XVIII դարերում: Լուսավորական շարժումը: Հասարակագիտական միտքը: Գրականությունը և արվեստը:

Մշակույթի վերելքի նախադրյալները XIX դարում – XX դարի սկզբին: Կրթական համակարգը: Գիտության զարգացումը: Գրականությունը: Արվեստը:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Աշխարհի զարգացման գլխավոր միտումներն ու արդյունքները: Հետարդյունաբերական հասարակությունը: Հասարակական առաջընթացի հեռանկարները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: Առաջին աշխարհամարտի արդյունքների ամփոփումը: Աշխարհի քաղաքական նոր վերաբաժանումը: Գաղութային տիրապետության նոր ձևի՝ կառավարման մանդատային

համակարգի հաստատումը: Ազգերի լիգայի ստեղծումը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգը:

Հասարակական զարգացման հիմնական ուղղությունները հետպատերազմյան ժամանակաշրջանում: Եվրոպակենտրոն աշխարհ: Գաղափարական և քաղաքական նոր ուղղությունների ձևավորումը: Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի կայացումն ու հոգևոր ճգնաժամի խնդիրը:

Ամբողջատիրական վարչակարգերը: Ֆաշիզմ և նացիզմ: Ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերը ԽՍՀՄ-ում, Թուրքիայում, Իրանում, Լատինական Ամերիկայի երկրներում:

Արևմտյան ժողովրդավարության երկրները՝ Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ: Նոր պետությունների կայացման գործընթացն Արևելյան Եվրոպայում: Քաղաքական համակարգի ընտրությունը:

Սոցիալ-տնտեսական կյանքը 1920-1930-ական թվականներին: Տնտեսության տարաձևերը: Կապիտալիզմի բարգավաճման ժամանակաշրջանը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Նէպ-ը Խորհրդային Ռուսաստանում: Պլանային տնտեսությունը: Սոցիալիզմի կառուցման խորհրդային մոդելը:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրները 20-րդ դարի առաջին կեսին: Պաղեստինը՝ բրիտանական մանդատի ներքո: Արաբական աշխարհը և նրա զարգացման ուղիները: Քեմալական Թուրքիան: Իրանի քաղաքական համակարգն ու արտաքին քաղաքականությունը: Ճապոնիայի, Չինաստանի և Հնդկաստանի արդիականացման գործընթացը:

Միջազգային հարաբերությունները: Ազգերի լիգայի գործունեությունը: Խաղաղասիրական միտումներն ու հավաքական անվտանգության խնդիրը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Հակամարտ խմբավորումների ձևավորումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը: Պատերազմի պատճառները, սկիզբը, փուլերը: Գերմանիայի հարձակումը Խորհրդային Միության վրա: Հակահիտլերյան խմբավորման ստեղծումը: Թեհրանի, Յալթայի և Պոտսդամի խորհրդաժողովները: Երկրորդ աշխարհամարտի ավարտը, հետևանքները:

## ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հակասությունների սրումը նախկին դաշնակիցների միջև: Սառը պատերազմի սկիզբը: Աշխարհի բաժանումը երկու ռազմաքաղաքական համակարգերի: Սպառազինությունների մրցավազքը: Տարածաշրջանային հակամարտությունները:

Երեք աշխարհ: Երկբևեռ աշխարհի ձևավորումը: Երրորդ աշխարհի ձևավորումը: Արևմտյան աշխարհի զարգացումն ու ներքին հիմնախնդիրները: Արևմուտքի երկրների գաղափարա-քաղաքական հոսանքներն ու քաղաքական կուսակցությունները: ԱՄՆ-ը՝ գերտերություն:

Սոցիալիստական ճամբարի ձևավորումը: ԽՍՀՄ–ը՝ գերտերություն: Սոցիալիստական հասարակության բարեփոխման փորձերը: Արևելաեվրոպական սոցիալիզմի ձախողումը:

«Երրորդ աշխարհի» երկրների զարգացման ուղիները (Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրները):

Միասնացման միտումներն ու միջազգային կառույցները: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծումն ու գործունեությունը: Եվրոպական ինտեգրացիան: Համաամերիկյան ինտեգրացիան: Ինտեգրացիոն միտումներն ու կառույցները արաբական աշխարհում: Գաղութային կայսրությունների փլուզումն ու հետկայսերական աշխարհի ձևավորումը: ԱՊՀ ստեղծումը:

Տնտեսական զարգացման ուղիները և առանձնահատկությունները երկրորդ Աշխարհամարտից հետո: ԱՄՆ-ի տնտեսական հզորացման պատճառները: Մարշալի պլանն ու արևմտաեվրոպական պետությունների տնտեսական զարգացման մոդելները. գերմանական և իտալական «հրաշքը»: Բարեկեցության պետությունն ու զարգացման «շվեդական» մոդելը: ՏՓԽ-ն և սոցիալիստական ճամբարի երկրների տնտեսությունը: Արևելյան և Հարավային Ասիայի երկրների տնտեսական առաջընթացի պատճառները:

Արևելքի երկրները 20 - րդ դարի երկրորդ կեսին: Արաբական աշխարհի երկրները: Իսրայելը և պաղեստինյան խնդիրը: Թուրքիա: Իրան: Չինաստան: Հնդկաստան: Ճապոնիա:

Արդյունաբերական հասարակության դարաշրջանի ավարտն ու հետարդյունաբերական հասարակության ձևավորումը: Գիտատեխնիկական հեղափոխությունը: Հետարդյունաբերական (տեղեկատվական) հասարակության ձևավորումը:

## ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Սառը պատերազմի ավարտը: Նոր աշխարհակարգը: Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը: Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրը: Ազգային ինքնորոշումն ու չճանաչված պետությունները: Արդի համաշխարհային զարգացման հիմնախնդիրները:

Համաշխարհայնացման գործընթացը: Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում:

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մշակութային զարգացման գլխավոր միտումները և նվաճումները: Կրթական համակարգը: Գիտատեխնիկական հեղափոխությունը և ժամանակակից աշխարհը: Գրականությունը: Արվեստը: Մշակութային կյանքի համաշխարհայնացումը: Փոփոխությունները մարդկանց ապրելակերպում:

# ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

«Համաշխարհային պատմության» դասընթացը ավագ դպրոցում բաղկացած է տեսությունից, գործնական աշխատանքներից, ցուցադրումներից (էքսկուրսիաներից):

Բոլոր հոսքերի համար տրվում են գործնական աշխատանքների, ցուցադրումների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն ու անհատական աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ):

Բոլոր հոսքերում հանձնարարվում է վերլուծել տեսական բնույթի խնդիրներ, առօրյա կյանքից վերցված օրինակներ, որոնց հիման վրա կազմակերպվող քննարկումները, ընդհանրացումները, բանավեճերը և գնահատումները մեծապես կնպաստեն սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը և տրամաբանական մտածողության զարգացմանը:

Ուսուցման ընթացքում, կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դրա առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները`

- ուսումնական նյութի բացատրում
- ուսումնական նյութի լուսաբանում
- աշխատանք դիդակտիկ նյութերի հետ (մոդելներ, քարտեզներ, ֆիլմեր, լուսանկարներ, մշակութային արժեքների նմուշներ)
- պատմական սկզբնաղբյուրների և լրացուցիչ պատմագիտական գրականության ուսումնասիրում, գործնական աշխատանքների կատարում
- հիմնահարցերի հետազոտություն, գործնական աշխատանքների կատարում
- իրավիճակների և արդյունքների վերլուծում
- գրավոր աշխատանքների կատարում
- բանավոր և գրավոր հարցումների, թեստային աշխատանքների անցկացում
- անհատական, խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Դասընթացում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը ինչպես տարբեր պատմական երևույթները համակողմանի ընկալելու, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու առումով, այնպես էլ ուսուցման պրոցեսն արդի պահանջներին համապատասխան և արդյունավետորեն կազմակերպելու նպատակով:

## ՍՈՎՈՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

**Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**
**«Համաշխարհային պատմություն» (X-XII դասարաններ)**
**առարկայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է.**

| Ա մակարդակ | Բ մակարդակ |
|---|---|
| Իմանա<br>-մարդկության պատմության վաղ ժամանակների,<br>-քարի, պղնձի-քարի և բրոնզի դարաշրջանների,<br>-քարի դարում մարդկանց զբաղմունքի տեսակների, աշխատանքի գործիքների և զինատեսակների աստիճանական փոփոխության, մարդկային հանրության զարգացման, նոր քարի դարից սկսած մարդկանց կյանքում տեղի ունեցած կարևոր փոփոխությունների (անցում նստակեցության, վաղ երկրագործության և անասնապահության սկզբնավորում, մետաղամշակության, բրուտության և այլ արհեստների առաջացում ու հետագա զարգացում և այլն),<br>-կրոնի և արվեստի առաջացման և վաղ քաղաքակրթության ժամանակաշրջանի մասին:<br>- միջնադարի, դրա ժամանակագրական սահմանների,<br>- միջնադարում ապրած ժողովուրդների, բնակչության, միջնադարյան երկրների ու պետությունների սահմանների,<br>- միջնադարյան մարդու կենցաղի ու սովորությունների<br>- ասպետության, հոգևորականության և գյուղացիության կյանքի պայմանների մասին,<br>-պետական-քաղաքական զարգացման (ավատատիրական մասնատվածությունից մինչև կենտրոնացված պետություններ), իշխանության դասային-ներկայա-ցուցչական մարմինների ձևավորման (պառլամենտ, գլխավոր շտատներ, ռայխստագ, սեյմ, կորտեսներ և այլն),<br>-միջին դարերում ժողովուրդների կապերի ու փոխազդեցության,<br>-ժողովուրդների մեծ գաղթի,<br>-Խաչակրաց արշավանքների,<br>-արաբական, թյուրքական և մոնղոլական նվաճումների,<br>-Արևելքի և Արևմուտքի առևտրատնտեսական և մշակութային կապերի մասին | Կարողանա<br>- բացատրել և համեմատել՝<br>- նախնադարյան տոհմ, տոհմական և հարևանային համայնք,<br>- հողի ընդհանուր սեփականություն և առանձին հողաբաժին,<br>- վաղ երկրագործություն, անասնապահություն, արհեստագործություն,<br>- կրոնի և արվեստի սկզբնական ձևեր,<br>- վաղ քաղաքակրթություն և պետություն հասկացությունները,<br>Իմանա և բացատրի<br>-պետության առաջացման,<br>-Հին Արևելքի և Անտիկ աշխարհի երկրների (Հին Եգիպտոս, Միջագետք, Իրան, Հնդկաստան, Հունաստան, Հռոմ և այլն) աշխարհագրության, բնակչության,<br>-տնտեսության առավել զարգացած ճյուղերի (երկրագործություն, անասնապահություն, արհեստներ, առևտուր, շինարարություն և այլն), գրի և գրականության առաջացման և զարգացման, ճարտարապետության, արվեստի և գիտության ձեռքբերումների, կենցաղի ու սովորույթների,<br>-Հին Արևելքի պետությունների, Անտիկ քաղաք-պետությունների, Հելլենիստական պետությունների և Հռոմեական պետության կազմավորման ու պատմական զարգացման, դրանց մղած պատերազմների մասին<br>- սոցիալական տարբեր խմբերի (դասեր, կաստաներ) դրությունը հինարևելյան և անտիկ հասարակություններում, ներկայացնել դրանց հարաբերությունները:<br>- ներկայացնել ավատատիրական պետության ձևերը,<br>- բնութագրել աշխարհիկ իշխանությունն ու հոգևոր իշխանությունը,<br>-Ռեֆորմացիա ու Հակառեֆորմացիա հասկացությունները,<br>Բնութագրել<br>-Վերածննդի տարբեր դարաշրջաններն ու ուղղությունները,<br>- միջնադարի առավել նշանավոր պետական, |

| | |
|---|---|
| | քաղաքական, հոգևոր և մշակութային գործիչներին, նրանց հայացքներն ու գործունեության արդյունքները, Ներկայացնել -միջնադարյան մարդու աշխարհայացքն ու պատկերացումները կյանքի գլխավոր հիմնահարցերի վերաբերյալ Իմանա -միջնադարում տնտեսության զարգացման, ագրարային և արհեստավորական արտադրության առաջընթացի (բնատնտեսությունից մինչև ապրանքադրամային տնտեսություն, համքարությունից մինչև մանուֆակտուրա), -միջնադարյան քաղաքների, որպես տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնների առաջացման ու զարգացման, առևտրի ու փոխանակության ձևավորման, -միջնադարում սոցիալական զարգացման և տարբեր դասերի (հոգևորականներ, ավատատերեր, գյուղացիներ, քաղաքային բնակչություն) դրության, -ավատատիրական աստիճանակարգության (հիերարխիայի) ձևավորման, դրանում հոգևորականության տեղի և դերի, -գյուղացիների հողային և անձնական կախվածության, -գյուղացիական ապստամբությունների, -սենյորների դեմ քաղաքների պայքարի և քաղաք-կոմունայի ձևավորման, բյուրգերության, |
| Կարողանա<br>- բացատրել արդյունաբերական հասարակություն և արդիականացում հասկացությունների բովանդակության կապը,<br>-գաղութային համակարգ հասկացությունը: | Կարողանա<br>- վերլուծել Անգլիան ամենազարգացած կապիտալիստական երկիրը դառնալու պատճառները:<br>- վերլուծել նոր ժամանակներում գիտության և մշակույթի զարգացման նախադրյալները,<br>- ներկայացնել և բացատրել արդյունաբերական հեղաշրջման էությունը, արդյունաբերական հեղաշրջման սոցիալական հետևանքները,<br>- ներկայացնել գաղութային համակարգի ձևավորումը: |
| Իմանա և օրինակներ բերի<br>-XIX դ. գիտության և տեխնիկայի նվաճումների մասին:<br>-հոգևոր մշակույթի ձեռքբերումներն աշխարհի զարգացած երկրներում XIX դարում: | Իմանա<br>-գաղութային զավթումների պատմությունը, Արևելքի գաղութացված երկրները և դրանց մայր երկրները (մետրոպոլիա):<br>-արդյունաբերական և ավանդական քաղաքակրթությունների բախման պատճառները XIX դարում:<br>Բացատրի<br>-«Ճապոնական հրաշքի» էությունը: |

| | |
|---|---|
| | Մեկնաբանի<br>-հոգևոր մշակույթի դերն արդյունաբերական քաղաքակրթության դարաշրջանում:<br>Բացատրի<br>-արդյունաբերական հեղաշրջման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը:<br>Ներկայացնի<br>-արդյունաբերական հեղաշրջման դրական արդյունքները:<br>Վերլուծի<br>-արդյունաբերական հեղաշրջման բացասական հետևանքները: |
| Իմանա և բացատրի<br>-հակաժողովրդավարական և ամբողջատիրական վարչակարգերի առանձնահատկությունները, դրանց դրսևորումները XX դարում,<br>Ծանոթ լինի<br>-ժամանակակից աշխարհի աշխարհաքաղաքական իրողությունների՝ հակամարտությունների և պատերազմների պատճառներին, ընթացքին, արդյունքներին և հետևանքներին: | Հիմնավորի<br>-ինչ նախադրյալներ կային հակաժողովրդավարական համակարգերի առաջացման համար:<br>Պատկերացնի<br>-դրանց դերը աշխարհաքաղաքական համակարգում Երկրորդ աշխարհամարտից հետո,<br>-միջազգային ինտեգրման էությունը, արդյունքները, միտումներն ու հեռանկարները,<br>Եզրահանգումներ անի<br>-հետինդուստրիալ քաղաքակրթության արդի իրողությունների մասին: |
| Ներկայացնի<br>-մարդկության արդի համընդհանուր հիմնահարցերի (ժողովրդագրական, պարենային, ուրբանիզացիոն և այլն) էությունը: | Վերլուծի<br>-մարդկության համընդհանուր հիմնահարցերի էությունը |

# ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Համաշխարհային պատմության» դասավանդման արդյունքում սովորողը պետք է.

- Գնահատի մարդկության պատմության ընթացքում ձեռք բերված քաղաքակրթական նվաճումները, իրեն համարի այդ ամենի օրինական ժառանգորդը, պահպանողն ու հաջորդ սերնդին փոխանցման պատասխանատու:
- Հարգալից վերաբերմունք ունենա այդ արժեքները ստեղծած սերունդների, նրանց ներկայացուցիչների նկատմամբ:
- Հպարտության զգացում ունենա սեփական ժողովրդի, նրա բազմահազարամյա պատմության ընթացքում ունեցած թռիչքների ու մշակութային ձեռքբերումների նկատմամբ:
- Հարգալից վերաբերմունք ունենա աշխարհի այլ տարածաշրջաններում ու մայրցամաքներում ապրող տարբեր ժողովուրդների և ազգերի, նրանց ապրելակերպի, ավանդույթների ու մշակույթի նկատմամբ:
- Գիտակցի, որ առանց անցյալի մարդկանց ամենօրյա տքնաջան աշխատանքի և փորձության, սխալների ու տառապանքների գնով ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների, անհնարին կլիներ ժամանակակից քաղաքակրթությունն ընդհանրապես:
- Գիտակցի պետության և ազգային-հոգևոր կառույցների կարևորությունն ազգային մշակույթի պահպանման ու ազգային պետության զարգացման գործում:
- Կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը:
- Գիտակցի խաղաղության, միջազգային համագործակցության կարևորությունը մարդկության առջև ծառացած համընդհանուր խնդիրները լուծելու տեսանկյունից:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Կրթության նպատակները, բովանդակությունը, մեթոդները, իրականացումը և գնահատումը փոխկապակցված են: Դրանց կարգավորման հիմքում ընկած է գնահատման ճիշտ ռազմավարության ընտրությունը, որը հետադարձ ազդեցությամբ կոչված է խթանելու կրթական ողջ համակարգի շարունակական զարգացումը: Որպես այդպիսին, գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Հանրակրթության պետական կրթակարգի դրույթներից բխում է, որ «Համաշխարհային պատմություն» դասընթացը ենթակա է, հիմնականում, ներքին գնահատման: Դրա բաղադրիչներն են անհատական և ֆրոնտալ հարցումը, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգումը, որոնք կիրառվում են դասի ընթացքում՝ դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ձևով: Այս կերպ գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի(դասարան) ձեռք բերած գիտելիքները ու կարողությունները, այլև նրա (դասարանի) զարգացման ընթացքը:

Դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից իրականացվող արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

«Համաշխարհային պատմություն» դասընթացից սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային-անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝

- չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը.
- սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները.
- մտավոր գործունեության մակարդակը:

Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Ըստ նպատակադրման կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝

ա. ընթացիկ գնահատում (ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը).

բ. ամփոփիչ գնահատում(ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը).

գ. հայտորոշիչ գնահատում(ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը).

դ. ձևավորող գնահատում(ճշգրտվում է դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, ուսումնական նյութը յուրացնելու նվազագույն շեմը, դասավանդման մեթոդները).

ե. հետազոտական գնահատում(հետազոտվում է ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսուցման արդյունքները):

Գնահատումն իրականացվում է գրավոր կամ բանավոր՝ հարցման, առաջադրանքի և գործնական աշխատանքի կատարման ստուգման, հարցարանի լրացման, ստուգարքի, քննության և այլ միջոցներով:

Գնահատման արդյունքն արտահայտվում է պաշտոնապես ընդունված միավորների սանդղակով՝ գնահատականներով:

Գնահատումն իրականացվում է «10» միավորային սանդղակով՝

| Միավորը | Անվանումը |
|---|---|
| 10 | «բացառիկ» |
| 9 | «գերազանց» |
| 8 | «շատ լավ» |
| 7 | «լավ» |
| 6 | «միջինից բարձր» |
| 5 | «միջին» |
| 4 | «բավարար» |
| 3 | «անբավարար» |
| 2 | «վատ» |
| 1 | «շատ վատ» |

Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները:

Բացի «10» միավորային համակարգից, ուսումնական գործընթացում կարելի է կիրառել նաև գնահատման այլ համակարգ՝ ապահովելով դրանց համարժեքությունը, կամ գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք:

Ստուգման արդյունքների հավաստիությունն ու վավերականությունը բարձրացնելու նպատակով նախընտրելի է ուսումնառության արդյունքների թեստավորումը, այսինքն՝ սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը հստակ ձևակերպված տարաբնույթ առաջադրանքների միջոցով, որոնք ունեն նույնքան հստակ ձևակերպված գնահատման արժեք՝ արտահայտված միավորների տեսքով:

## Գրականության ցանկ


76. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր:
77. ՀՀ կառավարության 2008թ. որոշման Հավելված 1:
78. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական
79. չափորոշիչ, Երևան, 2004:
80. Հերոդոտոս, Պատմություն, Երևան, 1986:
81. Հոմերոս, Իլիական, Երևան, 1955; 1987:
82. Հոմերոս, Ոդիսական, Երևան, 1957; 1988:
83. Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970:
84. Բորիսով Յու., Շառլ Մորիս Թալեյրան, Երևան, 1989:
85. Գոլովանով Յ., Էտյուդներ գիտնականների մասին, Երևան, 1984:
86. Գրիգորև Ս., Ալեքսանդր Սուվորով, Երևան, 1985:
87. Դիցաբանական բառարան, Երևան, 1985:
88. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
89. Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին(ուսումնական առաջադրանքներ և մեթոդական օժանդակ նյութեր), կազմեց Վ. Բայբուրդյանը, Երևան, 1984:
90. Լավրեցկի Ի., Սիմոն Բոլիվար, Երևան, 1975:
91. Լևանդովսկի Ա., Ժաննա դ' Արկ, Երևան, 1985:
92. Խաչատրյան Ի., ԱՄՆ-ի սահմանադրությունը, Երևան, 1991:
93. Հովսեփյան Մ., Միջազգային տնտեսական ինտեգրացիայի և գլոբալիզացիայի գործընթացները, Երևան, 2001:
94. Մանֆրեդ Ա., Երեք դիմանկար Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի, Երևան, 1988:
95. Նույնի՝ Նապոլեոն Բոնապարտ, Երևան, 1975:
96. Մոլչանով Ն., Գեներալ դը Գոլ, Երևան, 1976:
97. Նեյհարդ Ա., Շիշովա Ի., Հին աշխարհի յոթ հրաշալիքները, Երևան, 1989 (կամ ցանկացած այլ հրատարակություն):
98. Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը(երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, 2001:
99. Շտեկլի Ա., Գալիլեյ, Երևան, 1984:
100. Ստինգլ Մ., Հնդկացիական բուրգերի առեղծվածները, Երևան, 1977:
101. Վոլկով Ֆ., Ուայթհոլի և Դաունինգ-սթրիթի գաղտնիքները, Երևան, 1983:
102. Տալանով Ա., Նանսեն, Երևան, 1962:
103. Տրուխանովսկի Վ. Գ., Ուինստոն Չերչիլ. քաղաքական կենսագրություն, Երևան, 1972:
104. Ցվայգ Ս., Մագելանի սխրագործությունը, Երևան, 1989:
105. Նույնի՝ Մարդկության աստեղային ժամերը: Պատմական մանրապատումներ, Երևան, 1974:

106. Ուռչենկո Ս., Հուլիոս Կեսար, Երևան, 1980:

107. Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, «Տաքև գիտակրթական համալիր», N 1-2; N 3-4, Երևան, 2006:

108. Àëåêñàíäð Âåëèêèé â ëåãåíäàõ è èññëåäîâàíèÿõ Âîñòîêà è Çàïàäà, Ìîñêâà, 2000.

109. Êý Þàíü. Ìèôû äðåâíåãî Êèòàÿ, Ìîñêâà, 1987.

110. Òåìêèí Ý. Í., Ýðìàí Â. Ã. Ìèôû Äðåâíåé Èíäèè, Ìîñêâà, 1982.

111. Õðåñòîìàòèÿ ïî èñòîðèè Äðåâíåãî ìèðà(ïîä ðåä. Â. Áîðóõîâè÷à), Ñàðàòîâ, 1973.

112. Õðåñòîìàòèÿ ïî èñòîðèè ñðåäíèõ âåêîâ, ò.1, Ìîñêâà, 1949.

113. Àìèðõàíÿí À. Íàïîëåîí, êàêèì åãî çíàë òåëîõðàíèòåëü îðóæåíîñåö Ðóñòàì, Ìîñêâà, 2007.

114. Âåëåñüêî Â. È., Ñòàëèí., Ðóçâåëüò., ×åð÷èëëü… Ïîëèòè÷åñêèå ïîðòðåòû. Ìèíñê, 1991.

115. Âåëèêèå ïîëêîâîäöû è èõ áèòâû. À. Â. Âåíêîâ, Ñ. Â. Äåðêà÷, Ðîñòîâ-íà-Äîíó,1999

116. Âñåìèðíàÿ èñòîðèÿ íîâåéøåãî âðåìåíè. Ñïðàâî÷íîå ïîñîáèå, Ìèíñê, 1998.

117. Ãåðíè Î. Ð., Õåòòû, Ìîñêâà, 1987.

118. Æèëëåðè Ôðàíñèñ, Ëåäè Äîëæíà óìåðåòü, Íîâãîðîä, 2007.

119. Èëëþñòðèðîâàííàÿ èñòîðèÿ ìèðà, òò. I-III, Ìîñêâà, 1998.

120. Èñòîðèÿ: Áîëüøîé ñïðàâî÷íèê äëÿ øêîëüíèêîâ è ïîñòóïàþùèõ â âóçû, Ìîáàðîâ Â. Í., Àíäðååâ Ï., ÀíòîíåíêîÑ. Ò. è äð., Ìîñêâà, 2000.

121. Èñòîðèÿ äèïëîìàòèè, âòîðîå èçäàíèå, òò. 1-5, Ìîñêâà, 1975-1979.

122. Èñòîðèÿ äèïëîìàòèè(ñîñò. À. Ëàêòèîíîâ), Ìîñêâà, 2005.

123. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà è ñðåäíèõ âåêîâ. 5-6êë.: Äèäàêòè÷åñêèå ìàòåðèàëû, Ñóõîâ Â. Â. è äð.- Ìîñêâà, 2000.

124. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà, ó÷åá. äëÿ VI êë. ñð. ó÷åá. çàâåäåíèé, Âèãàñèí À. À., Ñàìîçâàíöåâà Í. Â., Ìîñêâà, 1995.

125. Èñòîðèÿ Äðåâíåãî ìèðà, â òðåõ òîìàõ, ïîä ðåäàêöèåé Äüÿêîíîâà È. Ì., Ìîñêâà, 1989.

126. Èñòîðèÿ Äðåâíåãî Ðèìà. Ïîä ðåäàêöèåé À. Ã. Áîêùàíèíà, Ìîñêâà, 1956.

127. Èñòîðèÿ Äðåâíåé Ãðåöèè. Ïîä ðåäàêöèåé Â. È. Àâäèåâà, Ìîñêâà, 1972.

128. Èñòîðèÿ ìåæäóíàðîäíûõ îòíîøåíèé è âíåøíåé ïîëèòèêè ÑÑÑÐ, òò. 1-3, Ìîñêâà, 1967.

129. Èñòîðèÿ ìèðîâûõ öèâèëèçàöèé ñ äðåâíåéøèõ âðåìåí äî êîíöà XX âåêà . 10-11 êë.: Ïîñîáèå äëÿ îáùåîáðàçîâ. ó÷åá. çàâåäåíèé, Õà÷àòóðÿí Ì. Â., ïîä ðåä. Â. È. Óêîëîâîé- Ìîñêâà, 2000.

130. Èñòîðèÿ ðåëèãèé. Ó÷åáíîå ïîñîáèå, Ìîñêâà, 2000.

131. Èñòîðèÿ ñðåäíèõ âåêîâ, ó÷åáíèê äëÿ VII êë.ñðåäíèõ ó÷åá. çàâåäåíèé, Áîéöîâ Ì., Øóêóðîâ Ð., Ìîñêâà, 1995.

132. Èñòðèí Â. À., Ðàçâèòèå ïèñüìà, Ì., 1961.

133. Ìàëàÿ èñòîðèÿ èñêóññòâà:

134. à) “Ïåðâîáûòíîå èñêóññòâî”, Ìîñêâà, 1982.

135. á) “Èñêóññòâî Äðåâíåãî Âîñòîêà”, Ìîñêâà, 1976.

136. â) “Àíòè÷íîå èñêóññòâî”, Ìîñêâà, 1972.

137. Ìèð â XX âåêå. Äîïîëíèòåëüíûå ìàòåðèàëû ê ó÷åáíèêàì ïî íîâåéøåé èñòîðèè, Ìîñêâà, 1999.
138. Ìîíòý Ï., Åãèïåò Ðàìñåñîâ, Ìîñêâà, 1989.
139. Ìóññêèé È. À. 100 âåëèêèõ äèïëîìàòîâ, Ìîñêâà, 2004.
140. 94. Íîâàÿ èñòîðèÿ, 1500-1800: Ó÷åáíèê äëÿ 7-ûõ êë. îáùåîáðàçîâàò. ó÷ðåæäåíèé. Þäîâñêàÿ À. ß., Áàðàíîâ Ï. À., Âàíþøêèíà Ë. Ì., Ìîñêâà, 2000.
141. 95. Íîâàÿ èñòîðèÿ, 1800-1918. Ó÷åáíèê äëÿ 8-ûõ êë. îáùåîáðàçîâàò. ó÷ðåæäåíèé. Þäîâñêàÿ À. ß., Áàðàíîâ Ï. À., Âàíþøêèíà Ë. Ì., Ìîñêâà, 2000.
142. Íîâèêîâ Ñ. Â., Ìàíûêèí À. Ñ. è äð. Âñåîáùàÿ èñòîðèÿ, Ìîñêâà, 2004.
143. Îëáðàéò Ì. Ðåëèãèÿ è ìèðîâàÿ ïîëèòèêà, Ìîñêâà, 2007.
144. Îïïåíõåéì À. Äðåâíÿÿ Ìåñîïîòàìèÿ, Ìîñêâà, 1990.
145. Ïàíàðèí À. Ñ. Ãëîáàëüíîå ïîëèòè÷åñêîå ïðîãíîçèðîâàíèå, Ìîñêâà, 2000.
146. Ïîëüêåí Ê., Ñöåïîíèí Õ. Êòî íå ìîë÷èò, òîò äîëæåí óìåðåòü, Ìîñêâà, 1984.
147. Ñàôðàñòÿí Ð.À., Äîêòðèíà îñìàíèçìà â ïîëèòè÷åñêîé æèçíè, Îñìàíñêîé èìïåðèè, Åðåâàí, 1985.
148. Òîéíáè À. Öèâèëèçàöèÿ ïåðåä ñóäîì èñòîðèè, Ñàíêò-Ïåòåðáóðã, 1995.
149. Õðîíèêà ÷åëîâå÷åñòâà: Áîëüøàÿ ýíöèêëîïåäèÿ, ñîñòàâèòåëü Á. Õàðåíáåðã, Ìîñêâà,1996.
150. ×óáèíñêèé Â.Â. Áèñìàðê: ïîëèòè÷åñêàÿ áèîãðàôèÿ, Ìîñêâà, 1988.
151. ßêîâëåâ Í. Í. Ôðàíêëèí Äåëàíî Ðóçâåëüò: ÷åëîâåê è ïîëèòèê, Ìîñêâà, 2003.
152. A concise history of the world, G. M. Roberts, New-York, Oxford University press. 1995.

Հաստատված է
ՀՀ ԿԳ նախարարի

-------- 2008թ. N ------ Ա/Ք հրամանով

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

## (X - XII դասարաններ)

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Համաշխարհային պատմություն» առարկայի՝ հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի խորացված ուսուցման X-XII դասարանների ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ «Կրթության մասին» օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգն ու Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, ինչպես նաև ավագ դպրոցների համակարգի ստեղծման ՀՀ կառավարության ռազմավարական ծրագիրը:

Հանրակրթական ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքային X-XII դասարաններում «Համաշխարհային պատմություն» առարկան ներկայացնում է համաշխարհային պատմության՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող թեմատիկան: Ծրագիրը հենվում է նախորդ կրթական աստիճանում՝ միջին դպրոցում ներդրված ծրագրի և դրա շրջանակներում մատուցված և արդեն յուրացված նյութի վրա և խորացվում է նոր հարցադրումներով ու հայեցակարգային մոտեցումներով: Դրանով ապահովվում է պատմական կրթության հաջորդականությունը:

Խորացված ուսուցման ծրագիրը կազմվել է նաև նկատի ունենալով ավագ դպրոցի պատմական կրթության չափորոշիչները, ինչպես նաև հումանիտար բարձրագույն կրթության ժամանակակից պահանջները:

Ծրագրի գիտական հայեցակարգի հիմքում ընկած են պատմագիտության ժամանակակից նվաճումները, որոնց անկյունաքարը պատմական գործընթացների բացատրման քաղաքակրթական մոտեցումն է: Ավագ դպրոցի հոսքային դասարաններում պատմագիտական նյութը մատուցվում է առավելապես մարդկային հասարակության քաղաքակրթական նվաճումների արժևորման տեսանկյունից՝ նպատակ ունենալով վերհանել տարբեր դարաշրջաններում ժողովուրդների ու պետությունների, ինչպես նաև տարածաշրջանների տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման ընդհանրություններն ու տարբերությունները: Կարևորվել է այն հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որոնք ծառացել ու ծառացած են մարդկության առջև և լուծվել են կամ սպասում են իրենց լուծմանը համամարդկային ջանքերի միջոցով:

Առարկայի նպատակն է՝ սովորողին հիմնարար գիտելիքներ տալ համաշխարհային պատմական զարգացման ընթացքի հիմնական օրինաչափությունների և առանձին քաղաքակրթությունների յուրահատկությունների վերաբերյալ, նպաստել սովորողի՝ պատմական կարևոր, արդիական իրադարձությունները և երևույթները ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, համադրելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, պատմությունն արժևորելու կարողությունների զարգացմանը: Ավագ դպրոցում հատկապես կարևորվում է սովորողների աշխարհայացքի ամբողջական ձևավորման խնդրի լուծումը: Առարկային կարևոր դեր է վերապահված ազգային ու համամարդկային արժեքային կողմնորոշիչներ ունեցող ազատ, գիտակից անհատի, քաղաքացու և ապագա մասնագետի ձևավորման գործում:

Համաշխարհային պատմության ուսումնական բովանդակությունը X-XII դասարաններում բաշխվում է հետևյալ կերպ.

X դասարան - Հին աշխարհի և միջնադարյան քաղաքակրթությունները. ընդգրկում է քաղաքակրթությունների առաջացումից մինչև վաղ միջնադարի ավարտի ժամանակաշրջանը,

XI դասարան – Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացումը Եվրոպայում ու Արևելքի երկրներում և Նոր ժամանակների քաղաքակրթությունները. ընդգրկում է մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն ընկած ժամանակաշրջանը:

XII դասարան – Համաշխարհային քաղաքակրթությունը նորագույն ժամանակներում. ընդգրկում է Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը:

Առարկային X դասարանում հատկացվում է տարեկան 102 ժամ, XI դասարանում՝ 170 ժամ, իսկ XII դասարանում՝ 272 ժամ: Ընդ որում, XII դասարանում երկրորդ կիսամյակի 136 ժամերը տրամադրվում են նախաքննական կրկնությանը:

Հոսքային ուսուցման ծրագրում յուրաքանչյուր թեմայի վերջում տրված են նաև բանավոր հարցման, թեմատիկ գրավոր, գործնական (ոչ բոլոր թեմաներում) աշխատանքների և կրկնությունների համար հատկացված ժամեր, որոնք թեմայի ուսումնասիրման համար նախատեսված ժամաքանակի մասն են կազմում:

# X դասարան

# ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

**(շաբաթական 3 ժամ, տարեկան 102 ժամ)**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

«Համաշխարհային պատմություն» առարկայի բովանդակությունը ավագ դպրոցում, դասավանդման նպատակները և խնդիրները: Պատմության պարբերացումը: Աղբյուրները:

Համաշխարհային պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը: Քաղաքակրթություն հասկացությունը: Քաղաքակրթության ակունքներում. «նեոլիթյան հեղափոխություն» (նստակեցություն, քաղաքներ, միջազգային առևտուր, գիր):

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (1 ժամ)

## ՄԱՍ 1. ՀԻՆ ՇՐՋԱՆ (78 ժամ)

## ԲԱԺԻՆ Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (16 ժամ)

### ԹԵՄԱ 1. Քաղաքակրթության սկիզբը (5 ժամ)

Առաջին պետությունները Միջագետքում և Եգիպտոսում (շումերական քաղաք-պետություններ, եգիպտական նոմեր): Արևելամիջերկրածովյան քաղաք-պետությունները: Հնդկաստան (Մոհենջոդարո և Խառապպա): Չինաստանի վաղ պետությունները:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)

### ԹԵՄԱ 2. Քաղաքակրթությունների վերելքը Արևելքում (11 ժամ)

Արևելյան պետությունների վերելքը (Եգիպտոսի Հին, Միջին և Նոր թագավորությունները, Աքքադ, Խեթական տերությունը, Միտաննի, Միջին ասորեստանյան թագավորություն):

Միջազգային հարաբերությունները Ք.ա.III-II հազարամյակներում: «Համաշխարհային» պետություններ (Նոր ասորեստանյան տերությունը, Աքեմենյան տերությունը):

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (3 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Բ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (23 ժամ)

### ԹԵՄԱ 3. Քաղաքակրթությունների կազմավորումը Արևմուտքում (8 ժամ)

Հունական աշխարհը Ք.ա. III-II հազարամյակներում. Կրետե-միկենյան քաղաքակրթությունը, Տրոյական պատերազմը: «Հոմերոսյան» դարաշրջանը: Առաջին պետությունները (վաղ հունական պոլիս, գաղութային պոլիսները, Իտալիայի էտրուսկյան քաղաքները):

Հունական պոլիսի էությունը և առանձնահատկությունները: Աթենքը Ք. ա. VIII – VI դարերում. Սոլոն, Կլիսթենես: Սպարտա:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԹԵՄԱ 4. Քաղաքակրթությունների վերելքը Արևմուտքում (15 ժամ)

Հույն-պարսկական պատերազմները: Աթենական պետությունը Ք.ա. V դարում; Պելոպոնեսյան պատերազմները: Պոլիսի ճգնաժամը (Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից), Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և հելլենիստական պետությունների ձևավորումը:

Իտալիան Ք.ա.II հազարամյակում և Ք. ա. I հազարամյակի սկզբին: Հռոմեական հանրապետությունը Ք.ա. V-I դարերում. Իտալիայի նվաճումը, Պունիկյան պատերազմները: Հռոմի նվաճումներն Արևելքում: Հռոմը Կենտրոնական Եվրոպայում: Հանրապետության կարգի ճգնաժամը (առաջին և երկրորդ եռապետությունները): Օգոստոսի պրինցիպատը: Հռոմեական կայսրությունը Ք. ա. I դարից մինչև III դարը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (5 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Գ. ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (20 ժամ)

### ԹԵՄԱ 5. Հին հասարակությունները (7 ժամ)

Հասարակություն (Եգիպտական հասարակությունը, Հնդկական կաստաները, Սպարտայի հասարակությունը): Ազատ մարդ (Ազատ քաղաքացիների համայնքը՝ Աթենական պետություն): Ստրուկ (անազատ բնակչություն՝ պարտային ստրկություն, ռազմագերի): Քաղաքակիրթ աշխարհը և բարբարոսական ծայրագավառը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԹԵՄԱ 6. Հոգևոր մշակույթը (13 ժամ)

Գիր. պատկերագիր-գաղափարագիր, սեպագիր, եգիպտական հիերոգլիֆային գիր: Գրականությունը: Գիտությունը. մաթեմատիկա, ֆիզիկա, աստղագիտություն, բժշկագիտություն, փիլիսոփայություն, պատմագիտություն: Արվեստը (ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն): Կրոն (հովանավոր աստված, աստվածների միությունը՝ դիցարան): Կրոնական սինկրետիզմ (բազմաստվածության ավարտը, համաշխարհային կրոններ՝ հուդայականություն, բուդդայականություն, քրիստոնեություն):

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (4 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Դ. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ (17 ժամ)

### ԹԵՄԱ 7. Քաղաքակրթությունների խաչմերուկում (6 ժամ)

Հունականացումը: Հելլենիզմ: Հռոմը և Արևելքի երկրները: Հռոմը և Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները: Եվրոպայի հռոմեականացումը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)

## ԹԵՄԱ 8. Հին աշխարհի ավարտը (11 ժամ)

Հռոմեական կայսրության թուլացումը: Արևմտյան և Արևելյան հռոմեական կայսրությունները: Արևելքի երկրները հելլենիստական դարաշրջանի ավարտին: «Բարբարոսական Եվրոպայի» ժողովուրդները Ք.ա. I – Ք. ծ. հ. IV դարերում:

Հնդկաստանը և Չինաստանը նոր հազարամյակի սկզբներին:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (4 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)

**ԱՄՓՈՓՈՒՄ (2 ժամ)**

## ՄԱՍ 2. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ (20 ժամ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Համաշխարհային պատմության միջնադարյան պարբերաշրջանը: Միջնադար հասկացությունը, շրջափուլերը, զարգացման առանձնահատկությունները և արդյունքները:

### ԲԱԺԻՆ Ա. ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ (16 ժամ)

#### ԹԵՄԱ 1. Միջնադարյան քաղաքակրթության ձևավորումը (16 ժամ)

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները: Հռոմեական և «բարբարոսական» քաղաքակրթությունների համադրումը: Միջնադարի ձևավորման ներքին ճանապարհը: Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակները:

Վաղ միջնադարի սոցիալական միջավայրը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Հասարակության սոցիալական կառուցվածքը: Ավատատիրական աստիճանակարգությունը:

Պետությունը վաղ միջնադարում: Իշխանության կազմակերպումը: Իրավունքը: «Սալիական դատաստանագիրքը»: Պայքար Արևմտյան հռոմեական կայսրության ժառանգության համար: Կառլոս Մեծի կայսրությունը: Սրբազան հռոմեական կայսրություն:

Քրիստոնեական եկեղեցին վաղ միջնադարում: Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: Պապականության առաջացումը: Եկեղեցին Եվրոպայի սոցիալ-քաղաքական կյանքում: Հերետիկոսական շարժումները:

Վաղ միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Պատմագրություն: Գրականություն: Արվեստ:

Բյուզանդիան V-VIIIդդ.: Ավատատիրություն: Բյուզանդական քաղաքակրթության ձևավորումը: Կայսերական իշխանությունը: Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը: Թեմական բարեփոխումը: Արաբա-բյուզանդական հակամարտությունը: Պատկերամարտություն:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (5 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԱՄՓՈՓՈՒՄ (3 ժամ)

# XI դասարան

# ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ
**(շաբաթական 5 ժամ, տարեկան 170 ժամ)**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)

Համաշխարհային պատմության միջնադարյան շրջանի քաղաքակրթությունները: Պատմական գործընթացի հիմնական առանձնահատկությունները և արդյունքները Եվրոպայում, Արևելքում և Ամերիկայում:

Նոր պատմության շրջափուլերը, զարգացման արդյունքները: Արդյունաբերական քաղաքակրթությունը՝ մարդկության զարգացման նոր աստիճան: Քաղաքակրթական բազմազանությունը:

## ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (1 ժամ)

## ՄԱՍ 1. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ (շարունակություն) (61 ժամ)

## ԲԱԺԻՆ Ա. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (25 ժամ)

### ԹԵՄԱ 1. Դասական միջնադարը Արևմտյան Եվրոպայում (18 ժամ)

Խաչակրության դարաշրջանը: Խաչակրաց արշավանքները: Խաչակրության արդյունքները և հետևանքները:

Սոցիալական միջավայրի վերակառուցումը: Գյուղատնտեսությունը: Միջնադարյան քաղաքների առաջացումը: Արհեստը և առևտուրը: Մանուֆակտուրա:

Դասային միապետության առաջացումը: Ավատատիրական հասարակության դասերի ձևավորման ավարտը: Անգլիական խորհրդարանը: Գլխավոր շտատները Ֆրանսիայում:

Ազգային պետությունների ձևավորումը: Ֆրանսիա: Անգլիա: Գերմանիա: Իսպանիա:

XIVդ. ճգնաժամը: Պապականության անկումը: Գյուղացիական ապստամբությունները:

Միջազգային հարաբերությունները Եվրոպայում: Հարյուրամյա պատերազմը:

Դասական միջնադարի մշակույթը: Կրթական համակարգը: Համալսարաններ: Նոր մշակույթի ծրագիրը: Հումանիստական գաղափարախոսության ձևավորումը: Պատմագիտության տեղը նոր աշխարհընկալման մեջ: Վաղ Վերածնունդը Իտալիայում: Նոր աշխարհայացքի ձևավորումը:

Բյուզանդիան IX-XVդդ.: Մակեդոնական Վերածնունդը: Խաչակրաց արշավանքները և Բյուզանդիան: Գաղափարաքաղաքական պայքարը Բյուզանդիայում: Բյուզանդական կայսրության անկումը: Բյուզանդական մշակույթը: Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները: Վաղ Բյուզանդական մշակույթը: Դասական շրջանի մշակույթը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (6 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԹԵՄԱ 2. Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում (7 ժամ)

Վաղ սլավոնական ցեղերը: Սոցիալական միջավայրը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Պետության կազմավորումը և զարգացումը: Սլավոնները և Բյուզանդիան: Ռուսիայի քրիստոնեացումը: «Ռուսիայից Ռուսաստան»: Ռուսական մշակույթը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ ( 2 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Բ. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (19 ժամ)

### ԹԵՄԱ 3. Միջնադարը Արևելքում (13 ժամ)

Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունները:

Հինդու քաղաքակրթությունը: Հասարակության սոցիալական աստիճանակարգությունը: Կաստաներ: Պետությունը: Մշակույթը:

Բուդդայականությունը արևելյան քաղաքակրթություններում: Չինաստանը միջնադարում: Սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները: Հասարակության քաղաքական կազմակերպումը: Կայսերական իշխանությունը: Մշակույթը:

Ճապոնիան միջնադարում: Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Կառավարման համակարգը: Մշակույթը:

Իսլամական քաղաքակրթությունը: Իսլամական քաղաքակրթության ձևավորումը: Սոցիալական միջավայրի կազմակերպումը: Խալիֆի իշխանությունը: Մշակույթը:

Իրանական քաղաքակրթությունը միջնադարում: Իրանը Սասանյանների օրոք: Իսլամի հաստատումը Իրանում: Միասնական պետության վերականգնումը:

Քոչվորական քաղաքակրթություններ: Քոչվորական քաղաքակրթության առանձնահատկությունները: Սելջուկ-թուրքեր: Մոնղոլական կայսրությունը: Օսմանյան տերությունը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (4 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

**ԹԵՄԱ 4. Մինչկոլումբոսյան Ամերիկա (6 ժամ)**

Ացտեկների, մայաների և ինկերի պետությունները: Սոցիալական միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները և տիպերը: Սոցիալական աստիճանակարգությունը: Պետությունը: Մինչկոլումբոսյան Ամերիկայի մշակույթը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Գ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

**(16 ժամ)**

**ԹԵՄԱ 5. Միջնադարյան քաղաքակրթության անկումը (16 ժամ)**

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց հետևանքները: Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը: Կապիտալի նախասկզբնական կուտակումը: Գյուղատնտեսության զարգացումը: Մանուֆակտուրա: Առևտուր: Բացարձակ միապետության առաջացումը:

Ռեֆորմացիոն շարժումը: Մարտին Լյութերը և Ռեֆորմացիայի սկիզբը: Ռեֆորմացիայի զարգացումը: «Թագավորական ռեֆորմացիան» Անգլիայում: Հուգենոտյան պատերազմները Ֆրանսիայում:

Նիդերլանդական հեղափոխությունը: Հեղափոխության նախադրյալները և սկիզբը: Հեղափոխության արդյունքները: Երեսնամյա պատերազմը: Նոր Եվրոպայի ծնունդը:

Արևմտյան Եվրոպայի մշակույթը XVI դարում: Նոր գիտության ծնունդը: Քաղաքական մտքի զարգացումը: Վերածննդի մշակույթը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (5 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

**ԱՄՓՈՓՈՒՄ (1 ժամ)**

## ՄԱՍ 2. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ (106 ժամ)

## ԲԱԺԻՆ Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (XVII ԴԱՐ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) ( 48 ժամ)

### ԹԵՄԱ 1. Աշխարհը Նոր ժամանակների սկզբին (6 ժամ)

**Աշխարհի երկրներն ու ժողովուրդները XVI – XVII դարերում:** Եվրոպական պետությունները: Ասիայի երկրների հասարակական-քաղաքական կացությունը: Աշխարհը նոր ժամանակների շեմին: Արդյունաբերական արտադրության աճը: Փոփոխություններ հասարակության սոցիալական համակարգում: Առևտրի զարգացումը:

**Մարդկանց կյանքը Եվրոպայում նոր ժամանակների սկզբին:** Մարդկանց ապրելակերպը: Կրթական մակարդակը: Քաղաքային և գյուղական կյանքը: Նորաձևությունը:

**Միահեծանությունը Եվրոպայում XVI-XVII դարերում:** Միահեծանության գաղափարական հիմնավորումը: Միահեծանության առանձնահատկությունները Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում: Միահեծանությունը Ռուսաստանում:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԹԵՄԱ 2. Եվրոպական քաղաքակրթության զարգացումը (9 ժամ)

**Արդյունաբերական հեղաշրջումը:** Արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները: Մանուֆակտուրային արտադրության զարգացումը XVII – XVIII դարերում: Արտադրողականության աճը: Ներքին և արտաքին առևտրի զարգացումը:

Անցումը մանուֆակտուրայից մեքենայական արտադրության: Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում: Արդյունաբերական հեղաշրջումը եվրոպական մյուս երկրներում:

**Արդյունաբերական հեղաշրջման ընկերային (սոցիալական) հետևանքները:** Նոր դասակարգերի և խմբերի ձևավորումը: Ձեռներեց-կապիտալիստների դարաշրջանը: Քաղաքային մշակույթի վերելքը: Բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Սոցիալական օրենսդրության ամրապնդումը:

**Խոշոր արտադրության աճը Եվրոպայում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:** Գիտատեխնիկական առաջընթացը: Արտադրության խոշորացման պատճառները: Մոնոպոլիստական կապիտալիզմը: Եվրոպայի տնտեսական վերելքը:

Միջազգային շուկայի ձևավորումը: Միջազգային հաղորդակցության ուղիների և միջոցների զարգացումը: Համաշխարհային առևտուրը XX դարի սկզբին:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԹԵՄԱ 3. Քաղաքական - գաղափարական կյանքի զարգացումը Եվրոպայում (24 ժամ)

**Ժողովրդավարական պետության ձևավորման գործընթացը:** Լուսավորական գաղափարների տարածումը: Սահմանադրական կարգի հաստատման միտումները և արդյունքները:

**Սահմանադրական կարգի հաստատման անգլիական ուղին:** 1640-1660թթ. հեղափոխությունը: Գաղափարական հոսանքները (պուրիտաններ, ինդեփենդենտներ, լևելերներ, դիգերներ): Ներքաղաքական պայքարը Անգլիայում 1660-1688թթ.: «Փառահեղ հեղափոխությունը»: Սահմանադրական օրենքները («Habeas corpus act», «Օրինագիծ իրավունքների մասին», «Օրինագիծ գահաժառանգման մասին»):

Պայքար ընտրական իրավունքի համար XIX դարում: Չարտիստական շարժումը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը: Ընտրական իրավունքի ընդլայնումը: Հասարակության ազատականացման օրենքները:

**Սահմանադրական կարգի հաստատման ֆրանսիական ուղին:** Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը՝ սահմանադրական կարգերի հաստատման սկիզբ: «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», 1791թ. սահմանադրությունը: 1830թ. հեղափոխության սահմանադրությունը: Երկրորդ հանրապետությունը: Երկրորդ կայսրության սահմանադրական կարգը: Հանրապետական շարժումը:

Սահմանադրական կարգի ամրապնդումը Երրորդ հանրապետության շրջանում (1870-1914 թթ.): 1875թ. սահմանադրությունը: Պայքար հանրապետության ժողովրդավարացման համար:

**Սահմանադրական կարգի հաստատման գերմանական ուղին:** Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը: Միասնական պետության ստեղծումը: Գերմանական կայսրության պետական կարգը: Քաղաքական կյանքի զարգացումը:

**Ավստրո-Հունգարիան՝ առանձնահատուկ սահմանադրական կայսրություն:** Ավստրո-Հունգարիայի առաջացումը: Երկմիասնական պետության սահմանադրությունը: Ազգային հիմնախնդիրը Ավստրո-Հունգարիայում:

**Սահմանադրական կարգի հաստատումը Իտալիայում:** Ազգային ինքնագիտակցության վերելքը XIX դարի կեսին: Միասնական պետության ստեղծումը: Իտալական թագավորության սահմանադրական կարգը: Պայքար ազատականացման համար: Վատիկանը՝ Իտալիայի հասարակական-քաղաքական կյանքում:

**Սահմանադրական պետությունների առաջացումը Բալկանյան թերակղզում:** Բալկանյան թերակղզու ժողովուրդները XIX դարի առաջին կեսին: Ինքնիշխան ազգային պետությունների ստեղծման նախադրյալները: Նորանկախ պետությունների սահմանադրությունները: Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի զարգացումը:

**Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին:** Ռուսական կայսրության քաղաքակրթական բազմազանությունը: Հասարակության նորացման՝ Պետրոս Մեծի ծրագիրը:

Զարգացման ուղու ընտրությունը. Եվրոպա, թե Ասիա: Հասարակական հոսանքներ՝ սլավոնասերներ, արևմտականներ, հեղափոխականներ:

Ազատական բարեփոխումները 1860-70-ական թվականներին: Ռուս նարոդնիկությունը: Սոցիալ-դեմոկրատական շարժումը: Սահմանադրական կարգի ստեղծման փորձը XX դարի սկզբին:

Քաղաքակրթական փոխազդեցությունները Ռուսաստանի ազգային շրջաններում: Ազգային հարցը Ռուսական կայսրությունում:

**Նոր ժամանակների քաղաքական-գաղափարական հիմնական ուղղությունները:** Լիբերալիզմ. ակունքները, հիմնական գաղափարները: Ազգայնականության երևան գալու պատճառները, դրսևորման ձևերը: Պահպանողականություն. առաջացման պատճառները, բնորոշ գծերը: Սոցիալիզմ: Սոցիալիզմի ակունքները: Մարքսիզմի սոցիալ-տնտեսական և գաղափարական բովանդակությունը: Սոցիալ-դեմոկրատական շարժումը, կուսակցությունների առաջացումը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (9 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԹԵՄԱ 4. Արդյունաբերական հասարակության ձևավորման ամերիկյան ուղին (9 ժամ)

**Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջացումը:** Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութները XVII - XVIII դարերում: Ամերիկյան ժողովրդի ձևավորման գործընթացը: Ամերիկյան լուսավորականությունը:

Անկախության պատերազմը: Մայրցամաքային կոնգրեսը: Պետության կազմակերպման համադաշնային կառուցվածքը: ԱՄՆ-ի սահմանադրությունը: Սահմանադրական առաջին փոփոխությունները:

**ԱՄՆ-ի քաղաքական զարգացումը. XIX դարի կեսեր - XX դարի սկիզբ:** Քաղաքացիական պատերազմը և ստրկության վերացումը: Քաղաքացիական հասարակության ստեղծման փորձերը: Ռասայական խտրականության պահպանումը: Ներքաղաքական պայքարը: Երկկուսակցական համակարգի ամրապնդումը: Ամերիկյան ժողովրդավարությունը (հասարակական կազմակերպություններ, մամուլ):

**ԱՄՆ-ի տնտեսական մեծ թռիչքը:** ԱՄՆ-ի տնտեսական հզորացման նախադրյալները: Ներքին միասնական շուկայի կազմավորումը: Տնտեսության զարգացման արդյունքները XX դարի սկզբին:

**Անկախ պետությունների առաջացումը Լատինական Ամերիկայում:** Ազատագրական պատերազմները և անկախ պետությունների ձևավորումը: Նորանկախ երկրների պետական կարգը: Պայքարը ազատականացման համար XIX դարի առաջին կեսին: Լատինաամերիկյան ազգերի կազմավորումը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (2 ժամ)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Բ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (20 ժամ)

### ԹԵՄԱ 5. Արևելքի երկրները (16 ժամ)

**Օսմանյան տերությունը:** Օսմանյան տերության զարգացման առանձնահատկությունները: Թանզիմաթյան բարեփոխումների առաջին փուլը: «Նոր օսմանների» շարժումը և սահմանադրության ընդունումը: Թանզիմաթի երկրորդ փուլը:

Երիտթուրքական շարժումը: 1908-1909թթ. հեղաշրջումը: Երիտթուրքերի կառավարումը 1908-1914թթ.:

**Արաբական երկրները (XIX դար - XX դարի սկիզբ):** Մուհամեդ Ալիի բարեփոխումները Եգիպտոսում: Եվրոպական երկրների տնտեսական ներթափանցումը Արաբական երկրներ: Արաբական ազգայնականության առաջացումը:

**Իրանի հասարակական-քաղաքական կացությունը (XVIII դար – XX դարի սկիզբ):** Եվրոպական տերությունները և Իրանը: Անգլո-ռուսական մրցակցությունը Իրանում XIX դարի առաջին կեսին: 1905-1911թթ. հեղափոխությունը Իրանում: Պայքար սահմանադրական կարգերի ստեղծման համար:

**Չինաստանը XIX դարի երկրորդ կեսին-XX դարի սկզբին:** Չինական քաղաքակրթության ճգնաժամը: Արդյունաբերական երկրների ներթափանցումը Չինաստան: Հասարակական-քաղաքական կարգի բարեփոխման փորձերը: 1911-1912 թվականների հեղափոխությունը Չինաստանում:

**Արդյունաբերական քաղաքակրթության առաջացումը Ճապոնիայում:** Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները: Սահմանադրական կարգերի ստեղծումը: Ճապոնիան XX դարի սկիզբին: Ճապոնիայի ռազմականացումը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (6 ժամ)
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

### ԹԵՄԱ 6. Համաշխարհային գաղութային համակարգը (4 ժամ)

**Գաղութային նվաճումները (XVIII դարի վերջ-XIX դարի կես):** Գաղութային նվաճումները Ասիայում և Աֆրիկայում: Անգլո-ֆրանսիական մրցակցությունը: Արևելահնդկական ընկերությունը: Կանադայի յուրացումը: Հնդկաստանի նվաճումը: Ֆրանսիայի գաղութային նվաճումները Մեծ հեղափոխության և նապոլեոնյան դարաշրջանում:

**Համաշխարհային գաղութային համակարգի կազմավորման ավարտը (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ):** Աֆրիկայի և Ասիայի գաղութային բաժանման ավարտը: Համաշխարհային գաղութային համակարգի կազմավորումը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (1 ժամ)
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

## ԲԱԺԻՆ Գ. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (21 ժամ)

### ԹԵՄԱ 7. Միջազգային հարաբերությունների զարգացման ընթացքը (12 ժամ)

